ՏԱՐԵՐՔ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

պրոֆ. Ռատցէլի

V.

ԿՐՕՆ

Բնական ազգերի *կրօնական կեանքի* և *մտածողութեան* հետազօտութիւնը դժուար է, որովհետև նրանք վարանելով են տեղեկութիւններ տալիս իրենց մտածած բարձրագոյն էակի մասին. շատ անգամ էլ այդ տեղեկութիւնները լինում են անկատար կամ թէ խաբելու մտքով հաղորդուած: Բնական ազգերը բոլորովին գաղափար չունին պարզ միաստուածութեան մասին: Դրանց մտաւոր կեանքը ոչ թէ միայն բաղկացած է անորոշ ցնորական պատկերներից, անկապ և թիւր է, այլ զուրկ է նաև մտքերի սերնդէ սերունդ հաղորդուելով զարգանալու այն յատկութիւնից, որ նախորդ սերունդների մտքերը կապակցում է ներկայ սերունդների մտքերի հետ: Եթէ կան այդ ազգերի մէջ կրօնական գաղափարներ, դրանք էլ յաճախ յայտնի են միայն ազգի մի քանի աւագներին, որոնք նախանձախնդրութեամբ պահպանում են: Վերջին հանգամանքից դուրս ևս՝ նրանք երկլեզ կրելով յայտնելու իրենց կրօնական գաղտնիքները, շատ կցկտուր և խեղաթիւրուած տեղեկութիւններ են տալիս:

Այդ պատճառով և *պէտք է զգուշանալ*՝ *բնական ազգերի կրօնական նախապաշարմունքներին* և *մտապատկերներին չնչին նշանակութիւն տալուց*: Նրանց հոգևոր ձգտումներն էլ միմիայն դէպի կեանքի գործնական նպատակները չեն ուղղուած. Նրանց կրօնը միևնոյն ժամանակ և՛ փիլիսոփայութիւն, և՛ գիտութիւն, պատմա-

կան աւանդութիւն և՛ բանաստեղծութիւն։ Յամենայն դէպս պէտք է շատ բան ենթադրել և դեռ շատ հետախուզել։ Սակայն նաև իսկական կրօնական խնդիրներում չպէտք է առաջնորդուել այն տեսակէտով՝ թէ այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի ծածուկ, պէտք է նոյնպէս հրապարակ դուրս գայ։ Այս նախապաշարումից առաջանում են ամենաանարդար և ներքին հակասութիւններով լի դատողութիւններ։ «Կատարեալ անկրօնութիւնը, ճշմարիտ անաստուածութիւնը հետևանք է մաշող, զգացմունքներ բթացնող չափազանց քաղաքակրթութեան, սակայն ո՛չ երբէք ազդեցութիւն կոշտ ու կոպիտ անքաղաքակրթութեան։ Անքաղաքակիրթ ազգերն ամենախորին անկման միջոցին էլ պահպանում են կրօնի պահանջը, որ համապատասխանում է կրօնական ընդունակութեան՝ լինի այդ թէկուզ սխալաշատ և խառնաշփոթ»։ (Շտրաուս)։

Աշխարհագրութեանը յայտնի չէն անկրօն ազգեր, այլ միայն կրօնական գաղափարների զարգացման տարբեր աստիճաններ. այդ գաղափարները մի տեղ սաղմի կամ աւելի ճիշտ է ասել բոժոժման մէջ են գտնւում, փոքր և անտեսանելի են, մինչդեռ մի այլ տեղ ճոխ զրոյցներով ու առասպելներով են պաճուճուել։ Սակայն մենք էլ անկատարելութիւնների մէջ միշտ սկզբնական դրութիւններ չպէտք է տեսնենք։ Յիշենք թէ ի՛նչ անճանաչելի նուազութեան են հասել կրօնական մեծ գաղափարները Աբիսինիայի քրիստոնէութեան, մոնղոլական բուդդայականութեան և Սուդանի իսլամութեան մէջ։ Կրօնական գաղափարների տարածման ոյժը նոյնչափ մեծ է, որչափ հաստատ է, որ այդ գաղափարներն այնտեղ նուազութեան կհասնեն, ուրտեղ առանձնացած, մեծ և կենդանի առասպելաբանութեամբ, կամ թէ ոգեշունչ վարդապետութեան հետ ունեցած կապակցութիւնից անջատուած՝ կնետուեն բնական ազգերի նիւթական կեանքի անապատը։ Արդէն այսօր գտնում ենք քրիստոնէական մտապատկերների եղծուած հատուածներ հնդկական և պօլինէզիական առասպելների մէջ, իսկ մահմեդականութեան եղծուած գաղափարները գտնում ենք Մալայեան և աֆրիկական առասպելների մէջ. եթէ դրանց տարած-

ման պատմութիւնը չգուշակէինք, դրանք կը ծառայէին իբրև ապացոյց՝ թէ այդտեղ միաստուածութեան սաղմերն են գտըն-ւում։ Բնական ազգերի բանաստեղծութիւններն ևս շատ տեղ կասկած են յարուցանում, որ եւրոպական հեքաթների, առած-ների և այլն մի որևէ ճիւղը պատահմամբ այդ երկիրն է ըն-կել և անման ուժի շնորհիւ, որ յատուկ է երևակայութեան այդ պատկերներին, իսկոյն օտար հողի մէջ շիւղեր է արձակել։ Մաքս Միւլլէրը Կալլաւայի «Nursery tales of the Zulus» (1866) երկի մի ծանօթութեանը կցել է այն խորին միտքը, որ դրանք, ինչպէս և մեր ժողովրդական գրոյցները և այլն, գոնէ այն չափով, որ չափով որ դրանք վերաբերում են ոգի-ներին, ըղձանոյշներին և հսկաներին, մատնացոյց են անում մի հեռաւոր քաղաքակրթութիւն կամ առ սակաւն՝ շատ եր-կարատև անման գործողութիւն։ «Ինչպէս լեզուի զարտուղու-թիւնները, դրանք էլ հէնց իրենց առանձնայատկութեան շնորհիւ ցոյց են տալիս, որ կար մի ժամանակաշրջան, երբ այսօրուայ անկանոնն ու անմիտը՝ մի որոշ նպատակով և կա-նոնաւոր էր կազմւում»։

Արտայայտութեան անկատարելութեամբ չպէտք է չափել մտքի խորութիւնը։ Պօլինեզիական առասպելաբանութեան մասին խօսելիս՝ պէտք է ի նկատի ունենալ, որ այդ ձևերով ձոխ գրոյցների հիւսուածքը ոչ թէ նման է պարզ խօսակցու-թեան, այլ մանկական թոթովանքի, որի միջոցին մեր ուշա-դրութիւնը դարձնում ենք ոչ թէ ասելու ձևի, այլ ասածի բովանդակութեան վրայ։ Շատ անգամ մի նման հնչիւն բա-ւական է լինում, որ այդ ազգերը դրա հետ կապակցեն իրենց մտքերի ընթացքը և շարունակեն։ Մի բնազանցական յարա-բերութեան նոյն դիտողութիւնն աւելի տպաւորիչ կերպով նկա-րագրուած կը լինի մի որև է յոյն բանաստեղծի մագաղաթեայ գրչագրի մէջ, քան թէ պօլինեզիական կամ աֆրիկական քա-հանայի կամ կախարդի բերանացի աւանդութեան մէջ։ Սա-կայն եթէ բնական մարդու թոթովանքից դուրս բերենք հաս-կանալի մտքերը, կստանանք մի այնպիսի պատկեր, որ ըստ էութեան շատ յետ չի մնալ վերոյիշեալ բանաստեղծական ար-

տայայտութիւնից։ Համեմատենք օրինակ հաւայի Հադէս գրոյցը յունաց համապատասխան զրոյցների հետ. «Մի ցեղապետ, որ իւր կնոջ մահուան պատճառով շատ անմխիթար դրութեան մէջ էր, իւր խնդրանաց համաձայն քահանայից իրաւունք ստացաւ, որ ցեղապետների աստուածն առաջնորդէ իրան Մեւուի պետութիւնը շրջագայելու։ Երկուսն էլ ճանապարհորդեցին մինչև աշխարհի ծայրը, ուր նրանք հասան մի ճեղքուած ծառի մօտ և նրա վրայով ցած սողացին դէպի անդունդը։ Աստուած այնտեղ մի ժայռի յետևը թագնուեց և ցեղապետին թոյլ տուեց առաջ գնալու՝ նախապէս թաթախելով նրան գարշահոտ ձիւթի մէջ։ Հասնելով Միլուի պալատը՝ նա տեսաւ, որ դղեակը լիքն է մեծ քանակութեամբ ակուաներով (հոգիներ), որոնք այնքան խորասուզուած էին իրենց խաղի մէջ, որ ցեղապետն առանց նկատուելու խառնուեց դրանց մէջ։ Բայց երբ նկատեցին նրան, մի նորեկ հոգու տեղ ընդունեցին և ծաղրեցին իբրև գարշահոտ հոգի՝ ենթադրելով որ այդ գարշահոտութիւնը ստացել է՝ երկար ժամանակ նեխուած մարմինների մօտ մնալով։ Երբ ամեն տեսակ խաղերից յետոյ՝ դրանք մտածում էին մի նոր խաղ հնարել, ցեղապետն առաջարկեց, որ ամենքն իրենց աչքերը դուրս հանեն և մի կոյտի վրայ ձգեն։ Ամենքն արագ կատարեցին այդ առաջարկութիւնը. ցեղապետն ուշադրութեամբ դիտեց թէ ո՞ւր ընկան Միլուի աչքերը և իսկոյն վերցնելով՝ թագցրեց իր կոկոսի բաժակի մէջ։ Այսպէսով երբ ամենքը կուրացան, նրան յաջողուեց հասնել Վաքէաի պետութիւնը, ուր իրաւունք չունէին գնալու Միլուի խմբերը։ Միլուն երկար բանակցելով Մակէայի հովանաւորութեան ներքոյ եղող ցեղապետի հետ, իր աչքերը յետ ստացաւ միայն այն պայմանով, որ ազատ թողեց ցեղապետի կնոջ հոգին. հոգին վերադարձաւ կրկին աշխարհ և միացաւ մարմնի հետ։

Կրօնն ամեն տեղ կապ ունի մարդուս այն պատճառականութեան պահանջի հետ, որ ամէն մի պատահարի պատճառը կամ հեղինակին է որոնում։ Նրա ամենախորին արմատները շօշափւում են գիտութեան հետ և սերտ կապակցուած են բնական զգացմունքի հետ։ Աֆրիկեան ալեմանների մասին ասում է, որ

նրանք սարեր և հովիտներ, ծառեր ու առուներ են պաշտում. ամեն բանին հոգի տալը, որ այս պաշտաման հիմքն է կազմում, մենք համարձակ կարող ենք վերագրել ամբողջ մարդկութեանը։ Այս պահանջին շատ համապատասխան է այն հակումն, որով բոլոր բնութեան երեւոյթները կենդանութիւն, մինչև անգամ մարդկային կերպարանք են ստանում, որովհետև դրանց ներ-գործում է մի հոգի, որ կառավարում է նրանց շարժողութիւններն ու փոփոխութիւնները և ապա նոյն իսկ դրանց յարաբերութիւնները մօտաւոր և հեռաւոր շրջակայքի հետ։ Դայեակների հայեացքով՝ բոյսերն էլ, մարդկանց պէս, հոգի ունին. երբ բրինձը փտում է, նշանակում է, որ նրա հոգին բոլորովին հեռացել է. բայց նա կարող է միւս աշխարհը գնալ, նորից մարմին առնել ու լիբրև կերակուր ծառայել։ Պատճառի և ներգործութեան օրէնքի սխալ գործադրութիւնն այդպիսի ու մարդկանց հոգիների մէջ յարաբերութիւններ է առաջացնում, որոնցից յետոյ պատճառաբանութեանց մի խիտ ցանց է հիւսւում։ Յաճախ պատմւում է Կօզա ցեղապետի զրոյցը. այդ ցեղապետը մեռնում է՝ երբ կոտրել է տալիս ափը դուրս ընկած մի խարխուլ կտորը. այդ օրից սկսած այդ խարխուլը պաշտաման առարկայ դարձաւ։ Այսպէս կապակցւում են հազարաւոր թելեր, որոնցից ոչ մէկը չէ մոռացւում. և աւանդութեանց այս ցանցի մէջ է թրպրտում բնութեան պարզամիտ որդին, ինչպէս սարդի ոստայնի մէջ ընկած ճանճը և քանի փորձում է գտնել իսկական թելը, այնքան ևս առաւել խճճւում է։ Հոգին այսպէս է ըմբռնւում բառացի կերպով. մի թել, որի վրայ ամրացած են բազմաթիւ բաց օղակներ, պահւում է տերևների մէջ. եթէ այն անձը, որի համար պատրաստուած է այդ, պատահմամբ տեսնում է թելը, իր հոգին դրանով բռնուած է համարում, տխրում է և մեռնում. Բանկ կղզիների վրայ այս փորձուած միջոցն է գործադրւում՝ մարդկանցը միւս աշխարհն ուղարկելու համար։ Այդ պատճառով և բնական մարդու աչքի ընկնող յատկութիւններից մէկն է՝ իւր երևակայութեան ոյժի ցնորքից վախենալը։ Երբ մելանեզցիներին հարցնում են՝ թէ ո՞վքեր էք, նրանք պատասխանում են. «մարդիկ», որպէս

զի արտայայտեն, որ իրենք ոգիներ կամ ուրուականներ չեն (Կոտրինգտոն)։ Բնական մարդն աւելի է վախենում գիշերից, քան թէ վատ դաստիարակուած մանուկը։ Ֆէլքինը գրում է վերին Նեղոսից. «բնիկներն երբե՛ք չեն համաձայնում գիշերով ճանապարհ գնալ՝ երկիւղ կրելով վայրենի գազաններից և լուսնի վատ ազդեցութիւնից։ Ամբողջ տարուայ կէսը ցերեկն էլ վատ են զգում իրենց և անտեսանելի զօրութեանց շնորհիւ իրենց վտանգաւոր դրութեան յարատև զգացմունքն աշխատում են գոնէ մասամբ ապահովել՝ ընդհանուր մարդկային հայեացքով ընդունուած դժբաղդ օրերի թիւը չափազանց մեծացնելով։ Այստեղ միայն երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերն են յաջող համարւում ճանապարհորդութեան համար. չորեքշաբթին ոչ լաւ և ոչ վատ է, իսկ կիրակին, երեքշաբթին և ուրբաթը դժբաղդութեան օրեր են»։ Եաւա կղզու վրայ բաղդաւոր օրերն ընտրելու համար նոյն իսկ գողերն ունին իրենց արծաթեայ և ժամացոյցի նմանուող թուացոյցը, որ օրացոյցի նման յարձակման կամ աւազակութեանց համար ամենալաւ ժամանակն է ցոյց տալիս։ Սպիտակ մարդիկն էլ, ինչպէս ամեն անսովոր և նոր բան՝ այդպիսի նախապաշարմանց նիւթ են դառնում։ Երկրի անյայտ մասերի յայտնագործութեան պատմութեան մի քանի ցաւալի միջադէպերը բացատրւում են այդ երևոյթով, որ շատ բնական է նեգրոսի ուրուականներով լի հոգու համար։ Լիւինգստոնն իւր «առաքելական ուղևորութեան» մէջ նկարագրում է այն երկիւղը, որ ազդում էր ինքը նեգրոսների վրայ՝ իբրև առաջին սպիտակ մարդն այդ երկրում, չնայելով որ նա սևամորթների ամենալաւ սպիտակ բարեկամն էր։ Սպիտակ մարդու ունեցած կամ գործածած իրերը նոյնպէս շուտով դասւում են հրաշագործ առարկաների, կուռքերի շարքը։ Արևմտեան աֆրիկացիները գրուած թուղթը կուռք (ֆէտիշ) են համարում և կախարդական գործ։ Երբ Բուխհօլցը կապում է ծանր վիրաւորուած մի հիւանդի վէրքը, աննկատելի կերպով նրա գրպանից մի թղթի կտոր է վայր ընկնում. երբ նա երկրորդ անգամ հիւանդին այցելութեան է գնում, տեսնում է, որ այդ տունը բոլորովին դատարկ է. բնակիչները փոխադրուել էին

ուրիշ տեղ, որովհետև կախարդուած էին համարում այդ տունը: Սակայն թղթի կտորը հանդիսաւոր կերպով վերադարձնում են տիրոջը: Մի քանի կնոջ թաղման օրը Նեգրոսների կողմից պատգամաւորներ են գալիս Բուխհօլցի մօտ և սաստիկ թախանձում, որ նա գրօսանքների միջոցին թղթի կտորներ չը թափէ, որովհետև իրենք ստիպուած են լինում այդ ճանապարհներից և տեղերից փախուստ տալ: Երբ Խապմանն այցելեց Նգամի վրայ եղող Լէտշուլատեբէս քաղաքը, ջերմից մեռնողների թիւը խիստ շատ էր և ցեղապետը սաստիկ երկիւղի ու յուզման մէջ էր՝ «ամեն տեղ թափառող մահուան» վերաբերմամբ: Նա բոլորովին չէր դուրս գալիս խրճիթից, իւր կանանցն ու երեխաներին ամեն տեսակ լուացումների էր ենթարկել տալիս և շարունակ աշխատեցնում էր իր բժիշկներին՝ զանազան եփած խոտերի ջրով անդադար սրսկել տալով խրճիթի շեմքը: Նոյնպէս՝ Նեգրոսների մերձաւորներին հրամայուած էր, որ ուրիշների հետ հաղորդակցութիւն ունենալուց առաջ երկարատև լուացումների և մաքրումների ենթարկուին:

Այսպիսով ուրեմն ոգի տուող շնչով լցուած է ոչ միայն բնութիւնը, այլև բոլոր իրերը: Ամեն մի գործողութեան, նոյն իսկ մարդկանց զարդարանքի և իրերի դրուագների մէջ աւելի շատ ոգեկան պարունակութիւն և նպատակ կայ, քան թէ մենք կարծում ենք: Այդ պատճառով ամեն կրօնի ստորին աստիճաններին յարմարում է բազմաստուածութիւն խօսքը: Ամեն տեղ երևում է մտապատկերներ բազմապատկելու միտումը. այն մութը ոգին, որից ծնունդ է առնում այս ամենը, ժամանակի ընթացքում, հետզհետէ, ուրով և հեշտութեամբ է աստուածներ ստեղծում: Ուր որ ազնիւ մարդիկն իբրև կէս կամ ամբողջ աստուածներ էին պաշտւում, ուր որ հոգիները ոչ թէ միայն շարունակում էին ապրել, այլ և այս աշխարհի հետ սերտ յարաբերութեան մէջ էին մնում, որտեղ ամեն մի ընտանիք իւր յատուկ պահապան հոգին ունէր՝ կենդանու կամ այլ կերպարանքով, այնտեղ հարկաւ պէտք է աստուածներն ու կուռքերն աճէին ու ծաղկէին և ամբողջ ոգին երևակայական առասպելների թաւուտներ դարձնէին: Սակայն այդ չպէտք է

նկատել միայն իբրև ստորին և երկիւղից առաջացած կրօնութիւն. ոգի տալը բարձր աստիճանների վրայ ձգտում են բանաստեղծութիւնն ու փիլիսոփայութիւնը։

Ո՞րտեղ են գտնւում այն աղբիւրները, որոնցից անդադար դուրս են գալիս ոգիներն ու ուրուականները միլիօնաւոր թուերով։ Նոյն իսկ մարդու կամ նրա մերձաւոր յարաբերութեանց մէջ եղած ամենաազդու փոփոխութիւնն առաջացնում է հիւանդութիւն, սով և մահ։ Նախապաշարմանց գլխաւոր պատճառը ո՛չ թէ բնութեան երկիւղն է, այլ մահուան կամ մահացածների երկիւղը։ Շամանների, հեքիմների, կօրաչիների և այլ անուններ կրող բոլոր կախարդների առաջին գործն է լինում միշտ՝ որոնել մահուան և հիւանդութեանց պատճառները և ապա մեռածների հոգիների հետ հաղորդակցութիւնը, որ ականատես մերձաւորները դիտում են երկչոտութեամբ, յաճախ երկիւղով և զղջումով։

Այդպիսով առաջանում է նախ առարկայապաշտութիւնը (ֆէտիշիզմուս), որ խառնաշփոթ կերպով յարաբերութիւններ է ստեղծում անթիւ հոգիների և այն ամեն տեսակ առարկաների, որոնց մէջ հաստատում են դրանք իրանց բնակութիւնը։ Նախնական հաւատի համակարգութեանց հիմունքներն այնպէս չեն կազմուել, որ արտաքին բնութեան առարկաներն ուղղակի ազդած լինէին մարդուս հոգու վրայ, այլ ընդհակառակը, նրա՝ շրջակայքում երկիւղով մի որև է յենակէտ որոնող երևակայութիւնը քմահաճութեամբ այնպիսի առարկաների է կպչում, որոնք յաճախ արժանի չեն լինում այդպիսի կապակցութեան։ Իսկ բնազանցական ազդեցութիւններ առաջացնելու համար անընդհատ փորձեր են լինում։ Մարդիկ ո՛չ թէ միայն աշխատում են նոր ոգիներ գտնել՝ տարօրինակ ձևակերպութիւն ունեցող քարեր դնելով մի որևէ ծառի վրայ՝ փորձելու համար թէ արդեօք ծառի պտղաւէտութիւնը չի աւելանայ, այլ նաև վաղուց արդէն յայտնի ոգիները փորձի ե՛ն ենթարկում՝ նրանց առաջը վատ, օրինակի համար փտած միս ձգելով։ Ինչո՞ւ Աֆրիկայում բոլոր նեգրոսները նախամեծարում են եղջիւրները. Նրանց կախարդներն իրենց զարդարում են մեծ քանակութեամբ

եղջիւրներով. քրմապետները, այսինքն թագաւորները, եղջիւրների մէջ են պահում իրենց երկիւղ պատճառող դեղերը: Ո՞րտեղից է առաջանում դայեակների և ալֆուրների համարեա թէ ծաղրածութեան հասնող կիզակաւի պաշտամունքը: Ինչ որ աչքի ընկնող բան կայ, տեղ է գտնում կաֆր կախարդների վզից և մէջքից կախուած տարօրինակ խառնակոյտի մէջ. մի տարօրինակ զուգադիպութեամբ Կապի առաջին անգամ գտնուած մեծ ադամանդի կտորը յայտնուեց մի կախարդի վզից կախուած կաշուի քսակի մէջ: Քարապաշտութիւնը բաւականին տարածուած է, բայց սովորաբար պաշտում են մերձակայ մեծ քարաժայռերը: Սակայն Աֆրիկայում ամեն մի քարի կտոր կարող է պաշտաման առարկայ (ֆէտիշ) դառնալ, եթէ փաթաթուի խայտաճամուկ լաթի մէջ և վզից կախուի: Մուսգուներն իբրև կուռք պաշտում են երկար ձողեր, գանդէզները՝ տձև փայտի կոճղեր, մեխերով ծածկուած, իսկ Կամերուն լերան շրջակայքում պաշտաման առարկայ են երկաթակճեայ (բազալտի) սիւները: Հազիւ կարելի է մի աֆրիկացի գտնել, որ պաշտաման առարկայ չունենայ կախուած և որովհետև շատ ցանկութիւններ, գործողութիւններ իրենց յատուկ պաշտաման առարկան ունին, այդ պատճառով և շատերը սաստիկ ծանրաբեռնուած են այդպիսի փրկարար իրերով: Այսպէս օրինակի համար կան այնպիսի հմայական բժժանքներ, որ խմելուց առաջ փորձում են ջրի համը և նրա մէջ եղած վտանգաւոր բաներից. զգուշացնում են խմողին, որովհետև չար ոգիները սիրով են ապրում այդ փայլփլող, փրփրացող և շարունակ փոփոխուող հեղուկի մէջ: Էսկիմոսի զէնքը միշտ կրում է մի փոքրիկ պահապան աստուած: Դրանցից միայն մի աստիճանով են տարբերւում այսպէս կոչուած կուռքերը, մեռածների պատկերները, որոնք շինւում են փայտից, մետաղից, կաւից, մոխրից և դրւում խրճիթներում կամ գերեզմանների վրայ: Երկուսն էլ հոգի ունին, միայն թէ նախնեաց հոգին, որ որոշ և յայտնի մարմին ունէր, այժմ բնակւում է կուռքի մէջ և յաճախ բռնում է իր սովորական տեղը, ինչպէս օրինակ շամանների (բուրդգայական քրմի) կուռքերն իւրտի մէջ դրւում են երենց հին տեղը,

մինչև որ նրա յիշատակը շատ անգամ տօնելուց յետոյ՝ ոչնչացնում է։ Այսպիսով ոգիների տեսանելի պատկերները ստեղծելուց յետոյ՝ հիմնում են նաև հոգեպաշտութեան համար առանձին վայրեր, ինչպէս օրինակ Աֆրիկայի պաշտամանց առարկաների խրճիթները, մալայացիների և պօլինեզիացիների տախտակամածները և վերջապէս տաճարները։ Այդ հիմնարկութիւններն յաճախ կցուած լինելով գերեզմանատներին, այսինքն ննջեցեալների հոգիների բնակարաններին, ճիշտ մեր եկեղեցիների շուրջն եղող հանգստարանների նման, ցոյց են տալիս այն կապակցութիւնը, որ տեղի ունի հանգուցեալների հոգիների հոգացողութեան և աստուածապաշտութեան մէջ։ Զանազանութիւնը միայն այն է, որ այն նախնական տաճարները յաճախ իրենց սկիզբն առնում են գերեզմանատնից։ Հիւսիսային ասիացի շամանն իրեն շրջապատում է ահագին քանակութեամբ փայտեայ կուռքերով, որոնց հետ նա զրուցատրում է կախարդական կոչումների միջոցին և որոնցից խորհուրդներ է ստանում։ Այդ կուռքերի թւում կան նաև կենդանիների պատկերներ, նմ մանաւանդ արջերի. նրա իւրտը իսկական հոգիների բնակարան է։ Առայժմ անորոշ է մնում՝ թէ արդեօք աւելի բարձր աստիճանի վրայ են գտնւում պաշտամանց խրճիթները, ուր չկան պատկերներ և այլ հոգիների մարմնացումներ։ Այդպիսի իսկական խրճիթներ կան Աֆրիկայում, իսկ Ովկիանեան աշխարհում գտնւում են փոքրիկ հոգիների տընակներ։

Բոլոր ազգերի Թաղման եղանակները նոյնպէս մի կտոր կրօն են պարունակում իրենց մէջ։ Այդ բոլոր եղանակների հիմնական միտքն այն է, որ հոգին իսկոյն չէ բաժանւում դիակից, կամ թէ չէ առ սակաւն մի որոշ կապ է պահպանւում երկուսի մէջ։ Պօլինեզիացիները պարզ ասում են, որ մահուանից յետոյ հոգին մի առժամանակ թափառում է գերեզմանի շրջակայքում, մինչև որ վերջապէս իջնում է Միլուի կամ Վաքէայի պետութիւնը։ Այդ մասին պարզ գաղափար ունին նաև Մալայեցիները, հիւսիս-արևմտեան ամերիկացիներն ու արևելեան ասիացիները։ Այդ է պատճառն ահա, որ դիակն ըստ մեծի

մասին մի առ ժամանակ անթաղ է մնում։ Խիլիկուլիսի հնդիկները մի ամբողջ տարի անցնելուց յետոյ են թաղում ննջեցեալի մարմինը։ Նոյնպէս և գերեզմանի մէջ իրեր դնելու տարածուած սովորութիւնը, դիակի մումիայի նման ձևակերպութիւնը, գերեզմանների վրայի հողակոյտի ճանաչելի դարձնելը, որ բոնգոների մօտ յուշարձանի բնաւորութիւն է կրում և ցեղապետների գերեզմանների վրայ իսկական շքեղ դամբարանների կառուցումն ու պահպանումը՝ ցոյց է տալիս, որ «անհոգի» դիակն էլ չէ նկատւում իբրև լոկ առարկայ։ Շատ ազգեր ենթադրելով, որ ննջեցեալների հոգիները ժամանակ առ ժամանակ վերադառնում են իրենց փտութեան մատնուող բնակարանները, գերեզմանի մէջ մի բացուածք են թողնում և երբեմն-երբեմն նոր կերակուր և ըմպելիք են դնում դիակի մօտ, կամ թէ գերեզմանի մէջ են ածում։ Այդ ճանապարհորդութիւնների միջոցին հոգին կարող է ուրիշ մարդկանց մէջ մտնել, նրանց կախարդել, ոչնչացնել կամ թէ անսպասելի բարձրութեան հասցնել։ Ուգանդա երկրում ենթադրւում է, որ իւրաքանչիւր կախարդի մէջ բնակւում է մի արքայի հոգի. իսկ սովորական հոգին, մուզիմուն, կարող է ամեն մարդու մէջ մտնել։ Որ հոգին գերեզմանի մէջ մտնելով՝ դեռ ևս չէ հանգստանում, ցոյց է տալիս այն հանգամանքը, որ գերեզմանի հողաբլուրի վրայ մի նաւակ է դրւում. հիւսիսում նաւակին փոխարինում է այն սահնակը, որով դիակը բերւում է վերջին հանգստարանը։ Գերեզմանի վրայ նաւակ դնելու այդ սովորութիւնից են առաջացել հիւսիսային գերմանների նաւակաձև գերեզմանաքարերը։ Կախարդական զօրութեամբ՝ հոգու դէպի դիակը վերադառնալը նոյնպէս կարելի է համարւում, ինչպէս որ կենդանի մարմնից դուրս գալը և մի որև է անասունի կերպարանք ստանալը. վերջինս աֆրիկացի կախարդների սիրած մասնագիտական զբաղմունքն է։ Ամեն առարկային հոգի վերագրող երևակայութիւնն առհասարակ ոչ մի սահման չէ դնում հոգիների թափառականութեան առաջ՝ թէև ամենից առաջ ի նկատի է առնւում կենդանական աշխարհը։ Դիակին պատուով վերաբերուելու զօրեղ պատճառներից մէկն է նաև

երկիւղը։ Դիակի շուտափոյթ ծածկելը, հողի վրայ կրելը, դըռներից խուսափելը, խրճթից բաւականին հեռու արագ թաղելը և այլն երկիւղով լցուած գործողութիւններ են։ Այս խնդրի վերաբերմամբ տարօրինակ կերպով ամենահակասական երևոյթներ են տեղի ունենում, որովհետև մինչդեռ կաֆրները յաճախ դիակները պարզապէս անտառն են տանում և բորեանների կերակուր դարձնում, ուրիշները թաղում են քարեայ գերեզմանների մէջ կամ իրենց ագարակներում։ Կամերուն երկրում տղամարդը թաղւում է իր խրճթի մէջ, իսկ կինը ճանապարհի վրայ։ Երբ հանգուցեալի խրճիթը դատարկւում կամ քարուքանդ է լինում, տան կահ-կարասիքն աւերւում և յաճախ մինչև անգամ նրա ստրուկներն ու հօտերը կոտորւում և նոյն իսկ նրա անունը մոռացութեան է տրւում—այս բոլորին գործակից է լինում ուրուականների երկիւղը։

Բնական ազգերի կարճամիտ ու թերակատար դատողութիւնը թոյլ է տալիս այսպիսի բազմատեսակ ձևերով արտայայտուող և խորին հաւատ ունենալ մարդկային մարմնի հոգի ընդունելու մասին և կարիք չէ զգում իրեն հաշիւ տալու այն վայրերի մասին, ուր որ մնում են հոգիները։ Սակայն այդ հաւատը նախապատրաստում է հանդերձեալ աշխարհի գաղափարի յօժարակամ ընդունելութիւնը. այդ գաղափարը հին եւրոպացիների, պօլինեզիացիների և հնդիկների մէջ զարմանալի նմանութեամբ առաջ գալով՝ աշխարհագրական տարածման մի նշանաւոր երողութիւն է ներկայացնում՝ աւելի շուտով մարդաբանական-աշխարհագրական, քան ժողովրդների հոգեբանութեան տեսակէտից։ Մի փոքր առաջ յիշուած առասպելը հոգի յափշտակող հաւայացի ցեղապետի մասին պարզ ցոյց է տալիս՝ թէ որ աստիճանին են հասնում այդ նմանութիւնները։ Ստորերկրեայ պետութիւնն իջնելը, այնտեղ իշխողին խաբելը, միւս հոգիների նախանձը և այլն հիմնական գծերով տեղի են ունենում շատ ազգերի առասպելական պատմութիւնների մէջ։ Ուրիշ են այն մտապատկերները, որոնք իրականութեան անմիջական արտացոլումներ լինելով՝ որոշ կարևորութիւն են ներկայացնում և ուրիշ այն մտքերը, որոնք երկրորդական կամ երրոր-

գական շարքերով կապակցւում են առաջինների հետ. վերջիններիս ծագումը միշտ պէտք է հիմնաւորապէս քննութեան ենթարկուի։

Այն, ինչ որ մենք կուռք ենք անուանում, ծագմամբ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հանգուցեալների արձան, նախնեաց պատկեր։ Քիչ է պատահում, որ հոգուն նշանակական (սիմբոլական) մարմնացումն տրուի, ինչպէս օրինակ այն փայտից շինուած և հոգի տանող թռչունը, որ սաւառնում է շամանների գլխին՝ մեռեալների յիշատակը տօնող հանդէսների միջոցին։ Սովորաբար մարդու պատկերն են վերցնում իր ամբողջ էութեամբ, որ յաճախ մի օրինակ է լինում։ Այս պատկերների և կռապաշտութեան—որ բնականաբար կախումն ունի այն բարեպաշտութիւնից, որով յարգւում են հանգուցեալները—մէջ եղած կապակցութիւնը նոյնպէս կրօնի մի հատուածն է։ Այսպիսով կարելի է բացատրել այն ուրիշ կերպ անբացատրելի տարբերութիւնը, որ տիրում է երկու մօտիկ ազգակից ցեղերի մէջ, ինչպէս օրինակ Նոյզուլինէայում մաֆուրէզները մեծ քանակութեամբ կուռքերի պատկերներ (կարօվար) ունեին, մինչդեռ արֆակները ոչ մէկն էլ չունեին։ Այժմ հասկանալի է նաև այն ներքին կապը, որ գոյութիւն ունի կռապաշտութեան և գանգապաշտութեան մէջ. չէ՞ որ գանգն էլ մեռածի արձան է։ Որչափ աւելի տեղի է տալիս յիշողութիւնը, այնչափ ևս աւելի պատկերը կորցնում է իւր անհատականութիւնը։ Տահիտիում, ուր Տիի անհատական-ընտանեկան կուռքերը տարբերւում էին Տու ժողովրդական կուռքերից, գլխաւորապէս վերջիններն էին, որ աներևոյթ դարձան. այդ կուռքերը յափշտակելու համար յաճախ կռիւներ էին տեղի ունենում ցեղակից ժողովուրդների մէջ։

Մահուան հետ ի միասին կեանքը և ծնելն ու ծնուելը նոյնպէս իբրև առեղծուածական և նշանակալից երևոյթ՝ բնազանցական յարաբերութիւնների մէջ են խճճուել։ Թէ ծընելու և թէ ծնուելու վայրկեանը սիրով են ներկայացնում պատկերների վրայ. ոտքերի առաջ երևալն էլ որոշ յարաբերութեան մէջ է դրւում առասպելաբանութեան հետ։ Նոր կեանքի

մէջ կայ մի հաստատութիւն, որ հակադիր է ոչնչացնող զօրութեանց: Զանազան ազգերի մէջ արական սեռի անդամը գործէ ածում իբրև պաշտպանութեան նշանակ՝ չար ոգիների դէմ: Իրարից բոլորովին տարբեր ազգերը զանազան ծիսակատարութեամբ տօնում են՝ ծնունդը, հասունութիւնն ու պսակը և այդ դէպքերի առաջնակարգ նշանակութիւնը շօշափելի դարձնում: Զարգացման աւելի բարձր աստիճանի վրայ՝ կեանքը շարունակելու այս մտապատկերների վրայ աւելացել է նաև **հանդերձեալ աշխարհի վարձատրութեան ու պատիժը**: Սակայն շատ ազգեր գաղափար չունեին այդ մասին: Բնական ազգերը նոյնպէս տարբերում են հանդերձեալ աշխարհը, սակայն ոչ թէ բարոյական, այլ ընկերավարական մտքով. ինչպէս օրինակ պօլինեզիացիները Միլուի և Մաւկէայի պետութիւնները զանազանում են միմեանցից. առաջինն աղմկալից է, այդտեղ ժողովւում են ստորին դասակարգի մարդկանց հոգիները և զուարճանում են խաղերով ու աղմկելով. իսկ երկրորդում տիրում է հանգիստն ու արժանաւորութիւնը՝ համապատասխան այդտեղ բնակուող ցեղապետների հոգիներին: Վալհալան միմիայն արիասիրտ և պատերազմի դաշտում ընկած քաջերի համար է. հնդիկ քաջամարտիկը նոյնպէս իւր արտօնեալ երկինքն ունի: Էական խնդիր է շեշտել, որ բարոյական ուսմունքները կրօնի անհրաժեշտ բաղկացուցիչ մասերը չեն կազմում, այլ աւելի բարձր աստիճանների վրայ կազմուող խառնուրդը:

Բնութեան երևոյթներից երկու դասակարգ ամենախորին ազդեցութիւնն են գործում անապահովութեան բնածին զգացման վրայ. մարդ ստիպուած է դրանց հետ որևէ յարաբերութեան մէջ մտնելու: **Բնութեան ուժերի վրայ գործադրութեան** առաջ՝ մարդս իրեն համեմատում է բնութեան ոյժի ու վեհութեան հետ և գիտակցում է իւր ստորադասութիւնը: Ամեն կողմից անթիւ արգելքներ սահմանափակում են նրա գործունէութիւնը և խափանում նրա կամքը: Նրա հոգին երկիւղ է կրում անսահման և անհիմն երևոյթներից և հազիւ թէ նեղութիւն է կրում այդ վեհ մեծութեան բաղկացուցիչ մասերով հետաքրքրուելու: Դաշտում գտնուող լեռն անտարակոյս շրջապատ-

ռած է առասպելներով. մթին անտառը պարփակում է իւր մէջ ոգիներ. փոթորիկները, երկրաշարժները, հրաբուխները ազդեցութիւն են ունենում իրենց անսպասելիութեամբ և շփոթեցնելով. այն ֆանտաստիկական կուռքերը, որոնցով լի են Աֆրիկայի անտառներն ու դաշտերը, յաճախ կայծակի հարուածներից առաջացած պատկերներ են և այլն։ Ամենախորին տըպաւորութիւնը թողնում են աստեղազարդ երկնքի երևոյթներն իրենց շարժողութեան վեհապանծ հանդարտութեամբ և կանոնաւորութեամբ։ Այդ տարօրինակ, երկրային իրերից տարբերուող երևոյթների գոյութիւնը, դրանց լոյսը և մեծ քանակութիւնը նոյն իսկ սկզբնական մարդու վրայ հարկաւ մեծ ազդեցութիւն պէտք է անէին։ Բոլորը, նոյն իսկ բուշմաններն ու աւստրալիացիք, անուններ են տալիս համաստեղութիւններին։ Արևի տաքացնող զօրութիւնը պէտք է ցուրտ երկրներում հարկաւ շնորհակալութեան աւելի մեծ զգացմունքով ընդունուէր, քան թէ տաք երկրներում։ Բնական ազգերն երկիւղ կրելով ուրուականներից՝ լուսնի և աստղերի լոյսը կրկնակի սիրով են ընդունում։ Դրա ապացոյց կարող է համարուել այն հողացողութիւնը, որով նրանք լուսնի խաւարման միջոցին ամեն կերպ աշխատում են խաւարեցնող ոգին դուրս քշելու և այն բարձր դիրքը, որ տրւում է լուսնին ազգերի կրօնական մտապատկերների և առասպելների շրջանում։ Ասել թէ՝ արևն իբրև լուսոյ աղբիւր ամեն ազգերից պաշտւում է իբրև աստուածային էութիւն և ընդհանուր բարերարուհի ընդունւում՝ չափազանցութիւն կլինի։ Սակայն արևապաշտութիւնը բաւականին տարածուած է նա մանաւանդ երկրագործ ժողովուրդների մէջ և բարձր զարգացման հասած մտապատկերների շրջաններում. նոյն իսկ Լապերի քրմերի կախարդական թմբուկների վրայ արևի պատկերն է նկարուած։ Շատ տարածուած են այն առասպելները, որոնք կապակցուած են արևի՝ երկրի հետ ունեցած զանազան դիրքերի և տարուայ եղանակների փոփոխութեանց հետ։ Մայր երկրի հետ ի միասին արգասաբեր արեգակն էլ ստեղծում է այն ամենը, ինչ որ կենդանի է, նոյնպէս և աստղերը։ Հանգուցեալ հերոսների հոգիները ձգտում են

դէպի երեկոյեան արևը: Արևի հետ է կապակցւում նաև ջրաջի պաշտամունքը. կրակն երբէք չպէտք է հանգցնել և երդմամբ պէտք է վառել: Ճապոնացիք նոր տարուայ օրը հանդիսով են տուն տանում կրակը, որ որոշեալ օրեր միայն ծիսական կարգով վառւում է տաճարում՝ փայտերը միմեանց շփելով: Այո, նոյն իսկ Ռուսները (Տամբովի շրջանում) ըստ կարելոյն շատ մոխիր և մի քանի քարեր են տանում հին օջախից դէպի նոր տունը, որովհետև դրանք բաղդ են բերում. այս սովորութիւնը կրակի տեղափոխութեան մնացորդն է:

Օդի փոփոխութեան երևոյթներն անմիջական ազդեցութիւն են ունենում և վնասում տնտեսական բարգաւաճմանը, այդ պատճառով և հասկանալի է՝ թէ ինչ մեծ դեր են խաղում մարդկանց հաւատի և նախապաշարմանց մէջ արև ու անձրև բերող և պտղաբերութիւն պատճառող երևոյթները: Դրանից յետոյ գալիս են այն երևոյթները, որոնք անմիջական յարաբերութեան մէջ չեն գտնւում մարդկանց հետ և վերջիններից ի նկատի են առնւում միայն այն ժամանակ, երբ բռնանում են իրենց վրայ: Նոյն իսկ բնական մարդը, մարդկային ցեղի նախապաշարումներով լի արարածը, ամենանեղ հայեցակէտ ունեցող մարդը տպաւորութիւն է ստանում ծիածանից-երկնքի կամուրջից-ծովի ալիքների շառաչիւնից, անտառի ծառերի խշշոցից և աղբիւրի կարկաչիւնից: Այս երևոյթները նախապաշարմանց մտապատկերների շրջանն են մտնում, որոնք նոյնպէս իրենց կողմից մօտաւոր պատճառներից են առաջացել: Մի՞թէ ոգիների պաշտամունք է, երբ Ալինոն դժուար ծովագնացութիւնից կամ ձկնորսութիւնից առաջ յաջողութիւն է խնդրում: Բնական ազգերին ծանօթ է օդաքարերի—մէտէօրների-անկումը, որոնց մասին նրանք աւանդաբար տեղեկութիւն են ստանում. երկրի մէջ խրուած քարի այդ հարուածներին նրանք շանթաքար են անուանում: Նրանք դիակով բեռնաւորուած նաւակը հրում են ծովի ալիքների մէջ, մութն անտառներին «տաբու» են վերագրում և ամէն մի առուակի մէջ ոգի են երևակայում: Այստեղ բանաստեղծութիւնն իւր արմատները հիւսում է կրօնի հետ և բոլորովին աւելորդ է հան-

գլխանում այն հարցը՝ թէ արդեօք այդ ազգերը բնական խելք ունին։

Սակայն ընկերավարական շարժառիթներ նոյնպէս խառնւում են վերոյիշեալների հետ։ Մեզ ծանօթ է և այն հանգամանքը, որ կենդանիներն ընկերավարական խմբակցութիւններով են ապրում։ Ձաման կենդանիների հետ վարւում է ինչպէս իրեն հաւասարի հետ. գլխին դնում է եղջերուի արհեստական եղջիւրներ, սնամէջ կենդանակերպ անօթից շան ալիւն է խմում, իր գլխի վրայով սնամէջ թռչուն է թռցնում, գետի աստուծուն զոհաբերութիւն է անում ձկնակերպ ամանից։ Գիլեակները կախարդական նպատակների համար պահում են, նա մանաւանդ հիւանդութիւնների ժամանակ, արջեր, խոզուկներ և կրիաներ։ Գեր արջի միսը նրանք իւրաքանչիւր տարի հանդիսաւոր կերպով են ուտում՝ յատուկ փայտեայ ամաններով։ Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ կենդանիներին և բոյսերին վերաբերեալ առասպելները սկզբնական ազգերի գրականութեան մեծագոյն մասն են կազմում։ Կենդանիներին տեղ է տրւում նոյն իսկ ցեղերի և ցեղապետների տոհմաբանութեան սկզբումը։ Որչափ ընդարձակ ծաւալ է ստացել հնդկական աշխարհահայեցողութիւնը, այնչափ և տարածուել է հոգեփոխութեան գաղափարը և նա՝ մանաւանդ կապկից առաջանալը. նոյն իսկ Ճապօնիան ունէր մի անգամ իւր սուրբ կապիկները։ Մարդակեր վայրենիներն իրենց ազգակից են համարում մարդակեր գիշատիչ կենդանիներին։ Այս կենդանիներին խնայելը (Մալայեցիները և Սենեգամբիայի Եօլօֆները կոկորդիլոսներին պահում են սրբազան լճակներում) ուրիշ կերպարանք է ստացել, ինչպէս օրինակ մատաբէլների արքայ Լօբէնգուլան մահուան պատիժ է նշանակել կոկորդիլոս սպանողի համար, որովհետև սպանուած կոկորդիլոսով կարելի է վտանգաւոր կախարդութիւններ անել։ Կենդանիներին պաշտելը կարող է և անուղղակի ձևով արտայայտուիլ։

Բազմաթիւ կրօնական հայեցողութիւններից անմիջապէս չէ ծագում մի Աստուծոյ, երկնքի տիրոջ և ամեն բանի արարչի գաղափարը. միայն պատահաբար է լուսոյ ճառագայթով լու-

աւորւում այդ գաղափարը։ Աւելի պակաս պարզ հասկացողութիւն ենք ստանում նրա էութեան մասին։ Անկասկած նախնիքների մեծարելու պաշտամունքը աստիճանաբար դառնում է ականաւոր մարդկանց ամբոխից վեր բարձրացնելու և մինչև երկինք հասցնելու սովորութիւն։ Այսպիսի աստուածացումն կարելի է ապացուցանել թէ Աֆրիկայում և թէ Ովկիանեան աշխարհում։ Ինկաների մօտ այդ արդէն սկսւում է նրանց կենդանութեան միջոցին։ Մարդկանց երկինք են տեղափոխում, որպէս զի այնտեղից աւելի մեծ չափով ազդեցութիւն ունենան։ Հանգուցեալների միլիոնաւոր հոգիները պէտք է իրենց առաջնորդող տէրերն ունենան, իսկ այդ բանի համար ամենից յարմար են նոյն իսկ նրանց երկրային տէրերը։ Եթէ մի Աստուծոյ էութեան պատկանում է և այն յատկութիւնը, որ նա մի տեղից զանազան բաներ է կատարում՝ առանց կապուած լինելու գործողութեան իրի և տեղի հետ, պէտք է ուրեմն նրան վեհ նշանակութիւն տալ։ Յիշողութեան թուլութիւնն էլ օգնում է, որ նրա երկրային կապերը մոռացւում և անորոշութեան են մատնւում։ Այսպիսով հոգիների մեծամասնութիւնը դառնում են ոգիներ և մարմնանում են կուռքերի մէջ, իսկ փոքրամասնութիւնն էլ դառնում են ցեղական աստուածներ. իսկ դոցանից առաջանում են ընդհանուրից ճանաչուած և տարածուած աստուածներ և վերջիններից էլ ծագում է աշխարհը ստեղծող մի Աստուծոյ գաղափարը։ Ստեղծագործութեան համար կարևոր են առ սակաւն առաջին մարդը և մի Աստուած, որ ստեղծելու կարողութիւն ունի։ Սովորաբար երկինքը կամ արեգակն են արժանի համարուել այդ կոչմանը. երկնքումն են ապրում սուրբ նախնիքը, որ կերպարանափոխուելով՝ դառնում են ստեղծող Աստուած։ Եւ վերջապէս բնական հայեցակէտը պահանջում է մեծ և տիրապետող ոգիներ՝ մեծ բաների համար և անթիւ փոքր ոգիներ՝ փոքր բաների համար։ Երկնքի ոգին, որ միևնոյն ժամանակ և ստեղծող է, հարկաւ առաջինը կը-լինի։ Այսպէս ուրեմն տարբեր ծայրերից ամենքը դիմում են դէպի մի բարձրագոյն էութեան, դէպի մի Աստուծոյ գաղափարը։ Ամեն տեղ լսում ենք մի բարձրագոյն էակի անունը, սակայն

կամացուկ և անորոշ: Յաճախ այդ գաղափարը բառացի կերպով նշանակում է՝ ամենամեծը, ցեղի հոգևոր պետը, հանգուցեալ հոգիների տիրապետողը և ստեղծողը: Նախնեաց պաշտաման վրայ հիմնուող այն իրողութիւնը, որ իւրաքանչիւր ժողովրդի մէջ զանազան ոգիներին զանազան խմբեր են յատկացնում, որոնք գաղտնի դաշնագրութեամբ իրենց զոհն առաջ են տանում և որոնք յաճախ այդ կապակցութեան ուժով են գործ դնում՝ հարկաւ արգելք է լինում մի աստուածութեան գաղափարին, մինչև որ մէկի մէջ չէ ձուլւում բազմաթիւը: Պաշտաման դասակարգութիւնն այնքան էլ ապահով չէ, որովհետև տարբեր երկրներում փոխւում է իբրև ամենաբարձր աստուած պաշտուածի անունը: Ընկերական կղզիների նեղ շրջանում բազմաթիւ անուններ են պաշտւում իբրև ամենամեծ աստուած՝ Տահիտի, Այմէօ և Րայատէա կղզիների վրայ պաշտւում է Րուան, Հուահայնէի վրայ՝ Տանէն, Բօլաբօլայի վրայ՝ Տաօն, Մաուրուաի վրայ՝ Տուն, Տարուաէմանուի վրայ՝ Տանգարօան կամ Տարաւան, Տահամի վրայ՝ Օրօն: Նոր Զելանդիայում բոլոր աստուածների գլխաւորն է համարւում երկնքումն ապրող Րանգին: Հաւայիի վրայ Տանէն առաջ է գալիս իբրև Կանէ և դրա հետ ի միասին պատերազմի աստուածը, Վակէան և Մաուիին, որոնք նշանաւոր են միայն դիցաբանութեան մէջ: Սակայն այս բոլոր բարձրագոյն աստուածները կարող են բոլորովին զրկուել պաշտաման առարկայ լինելուց՝ յօգուտ զուտ տեղական նշանակութիւն ունեցող նախնեաց աստուածների: Այդ բանին շատ նպաստեց այն հանգամանքը, որ պաշտողներից շատերը ցանկանում են անպատճառ իրենց յատուկ աստուածը կամ ոգին ունենալ: Ուժողները տկարներին յաղթելով՝ միշտ ստիպել են նրանց՝ երկրպագել իրենց աստուածներին: Ձիլլուկների մասին ընդհակառակը լսում ենք, որ Նիկամը համարեա թէ ամեն մի գիւղում մի տաճար կամ մի տուն ունէր, նոյն իսկ ամբողջ գիւղերի տէր էր, որոնց մէջ յետոյ բնակւեցան յարգուած և արտօնութիւններ ստացած կաստայի անդամները, որոնք մի տեսակ հոգևորական ազնուականութիւն էին կազմում: Դրանք ստանում էին ամեն տեսակ աւարի մի մասը.

ոչ ոք չէր համարձակւում դրանց կովերին կպչել և նոյն իսկ կթել։ Ցեղապետի հարստութիւնները գաղտնի էին պահւում Նիկամի շրջանում։ Աբբէօկուտայում ծղնօտի խուրձերը նշան են կայծակի աստուած Շանգօի սեպհականութեան, որ անձեռնմխելի է և ով համարձակուի ձեռք տալ դրան, կենթարկուի Շանգօ-քրմերի վրէժխնդրութեանը։ Նոյն իսկ Շանգօն մի հրահանգիչ երևոյթ է. ոմանք ենթադրում են, որ նա կենդանութեան ժամանակ սաստիկ բռնաւոր թագաւոր է եղել, ոմանք էլ ասում են, որ նա ծնուած և ապա անմահութիւն ընդունած աստուածային զաւակ է. երբեմն նա հանդիսանում է իբրև նախամարդ, երբեմն իբրև կայծակի աստուծոյ ուղեկից և ապա նաև իբրև կայծակի աստուած։ Այս բոլորն ապացոյց է, որ դա մի ցեղապետի հոգի է, որ վերջը Ոլիմպոս է բարձրացել։

Որովհետև դիցաբանութեան մէջ միևնոյն աստուածների և աստուածային գործողութեանց անունների փոփոխութիւնները խառնաշփոթութեան մշտական աղբիւր են կազմում, նա՛ մանաւանդ գիր չունեցող ազգերի մէջ, այդ պատճառով և դրանց պարզելը կարելի է միմիայն իրական հիմքերի ուսումնասիրութեամբ՝ առանց ուշադրութիւն դարձնելու դրանց դասակարգութեան վրայ։ Եթէ միայն մի առանձնացած իրողութեան վրայ ուշք դարձնելով՝ ընդունենք օրինակի համար, որ մարդկային ցեղի նախահօր վերակեցութիւնն ամերիկական առասպելի մէջ ջրհեղեղի մի բնորոշ ձևն է, այդ կնշանակէ, որ մենք չենք ճանաչում առասպելաբանութեան բազմաձև և փոփոխական էութիւնը։ Ընտրութեան և բարձրանալու ձգտումը յատուկ է մարդկային հոգուն և յաջող միջոցները բաւական են, որ տեղական աստուածներն՝ ընդհանրանալով տարածուեն և բարձրագոյն էութիւններ ճանաչուին. քրիստոնէութեան և մահմեդականութեան տարածուելը դորա ապացոյցն է։

Մարդու աղերսը մի անձնական էութեան հետ, որ բարձրագոյն որոշում է իրենը և որի հետ մարդս անձնական յարաբերութիւն ունի, ոչ մի տեղ պարզ ձևով չէ կազմակերպուել, այլ միշտ թերակատար, անբաւարար և բազմատեսակ

սխալներով: Կրօնն եւ իր զարգացման միջոցին մենակ չէ մնացել, այլ հետզհետէ աւելի ու աւելի սերտ կապակցուել է մարդկային հոգու այլ ձգտումների հետ և ամենից առաջ՝ խղճմտանքի յոյզերի և պահանջների հետ: Եւ այդպիսով կրօնն ընդունեց ամէնանշանաւոր յատկութիւնը, այն է՝ ծառայական դերը: Այդպիսով կրօնը բարձրագոյն ազդեցութիւն ունեցաւ ընդհանուր քաղաքակրթութեան վրայ: Մինչդեռ կրօնական զարգացման սկզբնական աստիճանների վրայ մարդս առաջ է գալիս համարեա թէ միայն իբրև պահանջող, որ ոգիների և կուռքերի վերաբերմամբ ցանկութիւններ է յայտնում և նոյն իսկ հրամայում նրանցը և նրանք էլ այդ ցանկութիւնները և հրամանները կատարելու համար գոհիր են ընդունում, այն ինչ այժմ ոգեկանն է իշխանութիւն ձեռք բերում և վարձատրութեան ու պատժի խոստումներով իշխում է մարդու վրայ և ոչ թէ միայն առաջնորդում է նրան, այլև հարկադրում: Կրօնի մէջ եղած բարոյական տարրերի այս զարգացման հետ զուգընթացաբար առաջ է գնում այն բազմաթիւ տարրերի զատումը, որոնք առանց ներքին ազգակցութեան կապակցուած են նրա հետ, ինչպէս որ ստորին աստիճանների վրայ ոչ միայն մարդուց դուրս գտնուող ոգիների ծառայութիւնը, այլ և մարդու մէջ գտնուող հոգու խնամքը, այսինքն թէ գիտութեան, թէ արուեստի և թէ բանաստեղծութեան սկզբունքները կախարդների, քրմերի և դրանց նմանների գործ են: Այսպիսով մենք հասանք մի կէտի, որ կարող ենք համեմատել շատ խառնաշփոթ ու գալարուած շաւիղների կենդրոնի հետ, որոնք այժմ միաւորւում են պարզ և ուղիղ ճանապարհների մէջ: Կրօնի շատ ստորացումների հետ կապակցուած, բայց վերջապէս վեհութեան հասցնող միութիւնը քաղաքացիական օրէնքների հետ, ազատում է նրան ոգեկան ամեն տեսակ գործունէութեան հետ ունեցած կապակցութիւնից, որոնք այնուհետև ինքնուրոյն զարգանում են՝ իբրև արուեստ և գիտութիւն: Այդ բաժանումը նախապատրաստւում է, երբ քրմի կատարած գործերը՝ կախարդելը, բժշկելը, անձրև բերելը, պատկերներ շինելը, պալատական երգեցողների խումբ կազմելը և այլն կատարւում են ու-

րիշ բազմաթիւ անձանց ձեռքով, բայց կատարելապէս իրականանում է արուեստի և գիտութեանց դարում։ Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ գիտութիւնը, արուեստն ու բանաստեղծութիւնն ինքնուրոյն գործունէութեամբ զարգանում են միայն Հին Յունաստանում. Եգիպտոսում դրանք բոլորն էլ դեռ կապակցուած էին քրմական դասակարգի հետ։

Աշխարհային և ոգեկան գլխաւորութեանց կապակցութիւնը կարելի է գտնել այժմեան մարդկութեան բոլոր աստիճանների վրայ։ Մի որև է ցեղապետի զօրութիւնն անկատար է՝ առանց կախարդական զօրութեան, որ կամ ինքը ցեղապետն է անձամբ գործադրում, կամ թէ իրեն հետ սերտ կապակցուած քրմերի ձեռքով. բացառութիւն կարող են կազմել միայն պատերազմի գլխաւորները։ Արդէն այստեղ բանաստեղծը պէտք է իշխանի հետ ընթանայ։ Անձրև բերելու արուեստի անյաջողութիւնը կարող է մի որև իշխանի վարկը բոլորովին կոտրել։ Աֆրիկայում յաճախ է պատահում, որ իշխանները գահից զրկւում կամ սպանւում են՝ եթէ նրանց կախարդութիւնն անյաջող ելք է ունենում։ Միւս կողմից էլ հազիւ թէ մի աւելի զօրեղ յենակէտ կարելի լինի երևակայել մի իշխանական տոհմի աւանդական իշխանութեան համար՝ քան նախնեաց պաշտամունքը, որ ամեն մի Ինկա Կուզկոսի սուրբ դարձրեց։ Ովկիանեան աշխարհում բազմաթիւ օրինակներ են եղել, որ իշխանները կամ պատերազմի հերոսները աստուածների շարքն են դասուել։ Այսպիսով էապէս զօրացաւ իշխանութեան ժառանգականութիւնը։ Յիշենք այստեղ Պ. Մէրիմէէի մի նկատողութիւնը, որ հռովմայեցիք բոլոր իտալիոտների մէջ առաւելութիւններ տուին Էտրուսկներին, որովհետև ծանօթ էին դրանց հին կրօնական աւանդութիւններին և հմայութիւններին։ Այն՝ ինչ որ լաւ է հասարակութեան և պետութեան համար՝ ցոյց է տրւում և իբրև աստուծուն հաճելի. այն ոգիները, որոնք յարաբերութեան մէջ են դրւում ընտանիքների, ընկերութեանց և պետութիւնների երջանկութեան հետ՝ կարող են միմիայն բարիք գործել։ Աստուածային պահանջների անփոփոխութեանց հետ կապակցւում են բարոյականութեան փոփոխական պահանջները, որ բաւակա-

նացնում է հասարակութեան խորին միտք պարունակող և մասամբ ազնիւ պահանջները՝ պատուիրելով յարգանք դէպի ծերութիւնը, ամուսնութիւնը և երեխաների պաշտպանութիւնը, բայց նաև սեպհականութեան պաշտպանութիւնը (վերին աստիճանի եսական Տաբու օրէնքները)։ Այդպիսով առաջանում է աշխարհային և ոգեկան շահերի միմեանց հետ խառնուելը։ Իշխանի հետ միասին մի տանիքի տակ՝ ժողովրդին յիմարացնող գործը կատարող խորամանկ քուրմը. մանաւանդ այս աստիճանի վրայ, միայն հնարովի բան չէ։ Եթէ ցեղապետը սուրբ մարդ է, ուրեմն և այն կարգի դէմ յանցանք գործելը, որի գլուխը նա է, մեղք է և այդ պատճառով կրօնն էլ ծառայում է խռովարարներին և յեղափոխականներին հեշտութեամբ զսպելուն։

Բարւոյ և չարի տարբերութիւնը, որ մովսիսական աւանդութիւնը խոր զգացմունքով մարդու ստեղծագործութեան սկիզբն է դնում, ուրիշ ճանապարհով էլ պէտք է վաղ և ինքն իրեն առաջացած լինի։ Բնութիւնն ինքը ցոյց է տալիս վնասակարն ու օգտակարը։ Շնորհակալութեան զգացմունքը դէպի բարին մշտապէս նորոգւում է։ Պէտք է ունենալ այդ զգացմունքը և խնամել կարողանալ։ Իսկ երբ բոլոր բարին վերագրւում է նախնիքներից մէկի հոգուն, դրանով բարին դիցաբանական մարմնացումն է ստանում։ Սակայն այստեղ բարին դեռ երկար ժամանակ միայն անհատներին է բարութիւն անում և ոչ թէ ամբողջ հասարակութեանը։ Բարւոյ մօտաւորապէս այդպիսի հասկացողութիւն է տիրում Նոր-Պոմերանիայում, որովհետև այդտեղ բոլոր լաւ բաների ստեղծագործութիւնը՝ թէ երկրների, թէ կարգ ու կանոնների, վերագրւում է միմիայն մի էակի՝ Տօ կարինանային, (իմաստուն), իսկ բոլոր վատ բաների ստեղծագործութիւնը մի ուրիշ էակի՝ Տօ կովուվարուին (անշնորհք?)։ Բարոյականութիւնից զուրկ և բարոյական սկզբունքներով լի կրօնների մէջ եղած խորին անդունդը փաստաբանում է երկնքի բնակիչների մարդկային թուլութիւնը։ Ինչու արդեօք դիցաբանական էակները, աստուածները, յաճախ բարոյապէս աւելի ապականուած ու վատ են՝ քան թէ դրանց պաշտող մարդիկը։

Ուժի և զօրութեան այն սխալ ըմբռնումը, որով նրանք աւելի բարձր պէտք է երևան ամբոխից՝ ստեղծում է մի սխալ իդէալ աստուածային մեծութեան մասին։ Դրան աւելանում է դիցաբանութեան մէջ և այն առասպելական տարրը, որ ամբողջ աշխարհում տարածուել է սխալ իդէալ՝ սիրոյ, պատերազմի և նոյն իսկ վաճառականական արկածների մէջ խաբող խորամանկ աստուծու մասին։

Քրմի մէջ մարմնացած է այն ոգիների աշխարհը, որոնց հետ նա հաղորդակցութիւն ունի և որոնց նա պէտք է հալածէ ու կանչէ։ Նրա կրթութիւնը կայանում է նրանում, որ դուրս քշէ սովորական հոգին և նրա տեղը մի նորը բերէ. ամենից լաւ յարմարւում է նա այդ բանին՝ եթէ հոգեպէս տարբերւում է մեծամասնութիւնից, հոգեկան հիւանդութիւն ունի, ընկնաւոր է և հակումն ունի յստակատեսութեան և երազատեսութեան։ Քրմերի աւանդութիւնները տարածւում են այն դաստիարակութեան շնորհիւ, որ տրւում է այդ բանին յարմար պատանիներին։ Քուրմը բնական մարդուց կերպարանափոխուելով և ոգիներին հրամայող դառնալով՝ հրաշագործի և մինչև անգամ մի տեսակ հոգեփոխի բնաւորութիւն է ստանում։ Երբ ֆէտիշը սիրում է, իր սիրոյ առարկան տանում է թփերի մէջ, թաղում կռատանը, որ յաճախ մի քանի տարի շարունակ մնում է թաղուած։ Երբ թաղուածը կրկին կենդանանում է, սկսում է առաջուայ պէս ուտել և խմել, սակայն նա այլ ևս առաջուայ հասկացողութիւնը չունի և քուրմը պէտք է նրան դաստիարակէ ամեն տեսակէտից, ինչպէս մի փոքրիկ երեխայ։ Սկզբում այդ դաստիարակութիւնը միմիայն փայտի միջոցով է կարելի լինում, սակայն հետզհետէ նրա գիտակցութիւնը զարթնում է և կարելի է լինում խօսել նրա հետ. իսկ երբ այդ դաստիարակութիւնը կատարելագործութեան է հասնում, քուրմը վերադարձնում է նրան ծնողներին, որոնք յաճախ չեն կարողանում ճանաչել իրենց որդուն՝ մինչև որ նա անցեալի յիշողութիւնները չվերականգնէ։

Քրմի արուեստի միջուկն է հանգուցեալների հոգիների հետ ունեցած հաղորդակցութիւնը, սակայն իբրև կախարդ՝ նա

բոլոր գիտութեանց, յիշողութեանց և նախազգացումների բովանդակողն է։ Եւրոպացիներից ոմանք գնահատել են նրա խոտերի և արմատների միջոցով բժշկութիւնները։ Կախարդական արուեստը բժշկական արուեստի բարձրագոյն աստիճանն է։ Բլէէքը հաստատապէս ասում է, որ Նատալի Կաֆրների դօկտորները կենդանիներին անդամահատում են, սակայն պատերազմի ժամանակ գաղտնի կերպով անդամահատում են նաև մարդկանց։ Սակայն այդպիսի օրինակներ շատ սակաւաթիւ են։ Յամենայն դէպս թէ այդ դօկտորները և թէ դրանց հիւանդները չեն բաւականանում միայն բնական միջոցներով՝ բոյսերով և կենդանիներով, այլ իրենց կարծիքով ամենից ապահով և արմատական միջոցն է՝ բնազանցական զօրութիւնների օգնութիւնը, որով բժշկւում են ոչ թէ միայն հիւանդութիւնները, այլ նաև ուրիշ չարիքներ, օրինակ սիրոյ թախիծը, ատելութիւնը, նախանձը և այլն։ Զգայութեանց պատրանք առաջ բերելու արուեստը լաւ գիտէին քրմերը և այդպիսով ստեղծում էին հաւատի նոր յենակէտներ։ Հիպնոտիզմի գաղտնիքը նրանց աւելի վաղ էր յայտնի քան գիտութեանը։ Ժողովուրդը ինքն էլ շատ բան գիտէ, սակայն ամենամեծ գաղտնիքները յայտնի են կախարդին։ Յաճախ այդ ազգերի պատմական գիտութիւնը կազմում է միայն այն նշանաւոր իրողութեանց աւանդութիւնը, որոնք գաղտնի և ժառանգաբար աւանդւում են քրմերին և խորհուրդ խնդրողներին անսպասելի երևում են բնազանցական գիտութեան շնորհիւ։ Այդ գիտութիւնը հարկաւ կարող է ծառայել նաև քաղաքականութեան և իշխողների նպատակներին։ Աւանդութեան սրբացնելը նպատակ ունէր աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու այդ. այդ մտքով կարելի է ասել, որ նա փոխարինում է գրին։ Գիրն ու գրքերի տպագրութիւնը վնասեցին հոգևորական դասակարգին. ուրեմն աւանդութեան արուեստը բոլորովին այլ կերպ է զարգանում. աւանդուած նշանների ու պատկերների գիտենալը և ապա գրելու ու կարդալու արուեստը, ըստ կարելոյն յատուկ գրերով, ինչպէս օրինակ եգիպտական քրմերինը, այդ արուեստի առանձնայատկութիւններն են։ Երկրիս զանազան ժողովրդների մէջ պատա-

հում ենք առանձին քրմական լեզուի: Այն նետերը, որ արձակւում են փախչող «չար ոգու» յետեւից, թէ ստորին Ամուրի վրայ, թէ Աֆրիկայում, Ամերիկայում եւ թէ Օվկիանեան աշխարհում, կախարդական գործիքների շարքն են դասւում:

Դիմակի գործածութիւնը կրօնական ծիսակատարութեանց միջոցին՝ տարածուած է բազմատեսակ հաւատ ունեցող բոլոր երկրներում. թէ մարդկանց եւ թէ կենդանիների դիմակները եւ սարսափ ազդող ու բիրտ գլխարկները գործածութիւն են գտնում կրօնական արարողութեանց միջոցին: Չինաստանում, Տիբեթում, Հնդկաստանում, Ցէյլօնում, հին մեքսիկացիների եւ պերուացիների մօտ տեսնում ենք նոյնը՝ ինչպէս նաեւ էսքիմոսների, մելանեզիացիների եւ աֆրիկական նեգրների մօտ: Ալէուտների գերեզմաններում դիակների հետ թաղուած են նաեւ դիմակներ, որոնց դիմագծերը ծաղրական ձեւերով են արտայայտուած եւ նմանւում են պարելու դիմակներին, որոնք մի ժամանակ հասարակ նպատակների էին ծառայում, իսկ այժմ կեանքի լուրջ մտապատկերների եւ մահուանից յետոյ յարութիւն առնելու մտքերի հետ են կապակցուած:

Նախագուշակութիւնները միայն մի ամբողջ գիտութիւն են ենթադրում: Դրանք այնչափ բազմաթիւ են, որ ամեն բան պարփակում են իրենց մէջ եւ ամեն կողմից անցկացնում են կեանքը, բերենք միայն մի քանի օրինակներ կաֆրներից. որսման ժամանակ եթէ կաթն ուտեն՝ կայծակը դէպի իրենց կքաշեն: Եթէ ուրիշի ամանով կաթն ուտեն, եղեռնագործութիւն կպատահի: Բազէ սպանողը կմեռնի: Եթէ բազէն իջնի մի խրճիթի վրայ, խրճիթի տիրոջը դժբաղդութիւն կպատահի: Կէսգիշերից առաջ եթէ աքաղաղը կանչէ, նշան է, որ մարդ կմեռնի կամ թէ անասուն կսատկի: Եթէ մէկն առանց գիտենալու կերակրի մէջ լեօպարդի ընչացք ուտէ՝ կհիւանդանայ կամ կմեռնի. իսկ ով որ այդ ընչացքն ուտէ լեօպարդի մի կտոր մսի հետ միասին՝ սրտոտ կլինի եւ որսի ժամանակ յաջողութիւն կունենայ: Ով փշերի մէջն է մտնում, պէտք է ուտէ այդ փշերը, որպէս զի հետեւեալ անգամ պաշտպանուի:

—Այն սարսափելի եւ շատ տարածուած հաւատը, թէ ոչ մի

անսովոր մահուան դէպք չի կարող բնական լինել, առաջացնում է բազմաթիւ կախարդութիւններ, որոնք ենթադրում են անհատների և նրանց ազդեցութեան ճանաչողութիւն: Անձրև բերելու կախարդութիւնը, կրակի վերանորոգութիւնը, դաշտային աշխատանքների սկսելը և որսը խիստ ծիսակատարութեամբ է տեղի ունենում:

[illegible]: Եւ որովհետև զարգացման ընթացքում հէնց դրանք են առաջ մղող ոյժերը, պարզ է, որ դրանից առաջանում է նաև կանգ առնելու մեծ հակումն, որի անհրաժեշտ հետևանքն է լճացածութիւնը: Այս բանում ամենից աւելի խրատական է կրօնի պատմութիւնը: Եթէ հարցնենք՝ թէ ինչ տարբերում մեծամեծ փոփոխութիւններ առաջացրեց քրիստոնէութիւնը Արևմտեան Եւրոպայում և բուդդայականութիւնը մոնղոլիայում, պատասխանը կլինի-ոչինչ: Բոլոր կրօնների հիմնադիրները աւելի վեհ իդէալներ են ունեցել, քան իրենց յաջորդները. և կրօնների պատմութիւնն ամենից առաջ ցոյց է տալիս անկումն այն բարձրութիւնից, որին հասել էր մաքուր ոգևորութեան շնորհիւ և դէպի որը ձգտում են յետոյ բարենորոգիչները և իրենց դաւանողները:

Միաստուածութեան գաղափարով մարդ ճաշակում է առաջընթաց ծերութեան և կեանքի փորձառութեան կծու դառնութիւնը: Այդ պատճառով զարմանալի չէ, որ մատաղ, պարզամիտ ազգերը չեն գնահատում միաստուածութեան զուտ արժանիքը: Ամբոխն ընդունակ չէ վերացական գաղափարներն ըմբռնելու: Նոյնը կարելի է ասել նաև դաւանաբանութեան մասին: Ամբոխի ֆանատիկոսութեան համար նշանակութիւն ունի ոչ թէ դաւանաբանական սկզբունքների ճշտութիւնը, այլ հաւատի սովորութեանց անխախտ մնալը: Թէ որպիսի դիւրութեամբ կրօնի տարբեր սկզբունքներն անյայտանում են ձևականութեան առաջ՝ ամենից լաւ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ Բիրմայի և Ցէյլօնի շատ տաճարներում միաժամանակ պաշտւում են թէ Բրահման և թէ Բուդդան: Կամբոջա-

յում գտնուող Անցկորֆատի աւերակները կրօնական սկզբունքների խառնակութեան հոյակապ վկաներն են։

Անկման արտաքին նշաններն են ջուջու և էօ-ըէա էբչղա-ադիօ-ըիւը։ Այդտեղից են առաջանում առաջին պառակտումները։ Յետոյ դրան աւելանում են արտաքին աւերիչ հանգամանքները (ոյժի նուազումն, աղքատութիւն, անկախութեան կորուստ, թուլի պակասելը) և շարունակում են քայքայումը։ Արուեստի հմտութիւնը զուգընթացաբար չէ առաջ գնում ոգեկան ստեղծողական ոյժի հետ։ Համեմատեցէք, օրինակի համար, պօլինեզիական դիցաբանութեան ոգեկան ստեղծագործութիւնները նրանց փայտեայ կամ քարեայ ձեւակերտների հետ։ Ոգին ցնդում է առանց այնպիսի ստեղծագործութիւնների, որոնք բոլորովին համապատասխանում են նրա ուժին և մեծութեանը։ Սակայն ձեւերը մնում են։ Այդ պատճառով և բնական ազգերի մօտ յաճախ նոյն իսկ ամենաանկատար ձեւերն աւելի բարձր են կանգնած՝ քան էութիւնը և այդ միայն արդէն ապացոյց է անկման։ Բարձրագոյն մտապատկերների խեղաթիւրուած հետքեր գտնում ենք համարեա թէ բոլոր կրօնների մէջ և ոչ թէ միայն ոգեկան, այլ նոյն իսկ զուտ նիւթական. ինչպէս Բուդդայական պաշտաման լիբերը կամ քրիստոնէական խաչերը, որոնք Տո-չայի ժամանակ իբրև ֆէտիշ կրում էին ստորին Կօնգոյի վրայ։ Քրիստոնէական մի քանի գաղափարները միսիօնարներից առաջ էին մուտք գործել այդտեղ։ Երբ Դօբրէյհօֆէրէն Իմպալադօի գուարանիներին քրիստոնէութիւն էր քարոզում, մի ծեր կացիկէ պատասխանեց նրան. «Տէր հայր, դուք զուր էք եկել, մեզ քահանայ հարկաւոր չէ։ Սուրբ Թովմասը վաղուց արդէն իւր օրհնութիւնը հաղորդել է մեր երկրին»։ Սատանայի կամ առաջնակարգ չար ոգու գաղափարը քրիստոնէութիւնից առաջ տարածել են անկիրթ Եւրոպացիները և առիթ տուել ընդունելու՝ «սատանայապաշտութեան» կամ բարի և չար ոգիների երկւորութեան գաղափարները։ Ինչ վերաբերում է մասամբ կասկածելի ստեղծագործութեան և ջրհեղեղի առասպելների նմանութիւնը սուրբ գրքի այդ պատմութիւններին, դրանք այնքան տարածուած են և

նոյն կերպով հիւսուած ամբողջ դիցաբանութեան մէջ, որ չենք կարող դրանց պատահական կամ նոր ժամանակի ծագումն վերագրել. դրանք մասամբ պատկանում են համաշխարհային առասպելաբանութեանը, որոնց ծագումը քրիստոնէութիւնից առաջ է։

Արդեօք կրօնը կցկտուած է զարգացել, թէ նման է մի հիւսուածքի, որի գործուածքը տեղ տեղ խիտ է, տեղ տեղ նոսր։ Պատասխանն աւելի շատ բան է պարունակում, քան կարող է տալ մի որևէ դասակարգութիւն. դասակարգութիւն անել կարելի է միայն այն ժամանակ, երբ մեզ համար պարզ լինի, թէ ինչն է մարդկութեան ընդհանուր սեփականութիւնը և ինչը մի ժողովրդի անհատական սեփականութիւնը։ Ինչ որ այդ մասին այստեղ ասենք՝ կապ կունենայ մարդկութեան ընդհանուր սեփականութեան մասին մի փոքր առաջ մեր ասածների հետ։ Ամենից առաջ ընդհանուր մարդկային են ոգիներին հաւատալը և նախնիներին պաշտելը. Բազմաթիւ տարրական մտքեր է անուանում այդ բաները։ Ինչպէս որ տեսնում ենք թաղման սովորութիւններից, դրանք յաճախ ամենափոքր մանրամասնութիւններով համապատասխանում են իրար։ Դրանից կարելի էր բնական ազգերի մի ընդհանուր հոգեգիտութիւն կազմել։ Այստեղ զարմանալի կերպով իրար հետ համաձայնում են թէ չինական և հնդկական և թէ գերմանական և աւստրալիական հատակոտորները և կազմում են մի միացած և հիմնական ճիշտ հետևողութիւն ունեցող ուսմունք։ Դրա հետ կապակցւում է բնութեան ամէն բանին հոգի վերագրելը։ Թէև Գրենլանդիայում և Ֆիջիում տարբեր կերերին է հոգի տրւում, սակայն միևնոյն աղբիւրից բացարձակապէս միատեսակ սովորութիւններ են առաջանում։ Այդ պատճառով և այն մարդիկը, որոնց իշխանութիւն է տրուած այդ բաների վրայ՝ վերին աստիճանի միանման են կազմակերպուած. հիւսիսային ասիայի շամանը, աֆրիկացի անձրև բերողը, ամերիկացի բժիշկը և աւստրալիացի կախարդը թէ ըստ էութեան, թէ ըստ նպատակի և մասամբ նաև օժանդակիչ միջոցներով և մեթոդով նման են։

Համաշխարհային առասպելի ամենամեծ յատկանիշն է եր-

կնքի և երկրի հակադրութիւնը։ Երկինքը համարւում է երբեմն երկինք, երբեմն արեգակ կամ թէ արեգակն երկնքի աչքն է. երկուսն էլ փոխարինում են միմեանց. այսպէս օրինակ հարաւային ամերիկացիները հիւսիսային ամերիկացիների պարզ հաւատի փոխարէն, սրանք արևն ընդունում են իբրև հոգու ապագայ բնակարան, երկինքն են ընդունում իբրև այդպիսի բնակատեղի։ Ստեղծագործութեան մէջ արեգակը երկնքի օգնականն է։ Երկիրը երկուսի դիմացն էլ հաւասար դիրք ունի բռնած և դրա արարածները ստորադրուած են առաջիններին. Նա միշտ միևնոյն կինն է, որի հետ երկինքը միանալով ստեղծեց այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի, նա մանաւանդ մարդկանց։ Արևի, կայծակի (որոտման աստուած), կրակի, հրաբուխների և երկրաշարժների շուրջն են խմբւում նաև ստեղծողի օգնականի մտապատկերները. այդ օգնականը նոյնչափ մօտենում է երկրին՝ արևի ընթացքի, կայծակի փայլատակելու, հրաբուխների ժայթելու ժամանակ, որչափ որ երկինքը հեռու է մնում նրանից։ Հեփեստոսն ու Պրոմէթէոսը, Դէմ:յուրգն ու պատժուած հրաբերը, կենդանացնողն ու աւերողը կենդրոնումն են, իսկ երկինքը, ամենքի հայրը, նրանից շատ յետ է մնում։ Մաուսի—առասպելները ընդհանուր մարդկային են և ոչ թէ մասնաւորապէս պօլինեզիական։ Դրանց կարելի էր նոնպէս Լօքի կոչել, որ մի ստորերկրեայ կաղ է, կամ դարամուլում, բարաւացին՝ աւստրալիայի ցեղերի որոտման աստուածը, որի անունը Բէւըէյն բառացի թարգմանում է. «ոտքը մէկ կողմի վրայ» եմ «կաղ» կամ թէ հոթինդոտների թղուիգօաբ, որ նշանակում է «վիրաւորուած ծունկ»։ Մաուին Հեփեստոսի նման խեղանդամ է և բնակւում է երկրում. հարաւային աֆրիկացիները հաւատում են մի կաղ աստուած, որ ապրում է գետնի տակ. դա էլ նոյնն է....։

Շատ ազգեր ընդունում են, որ արևելքում ապրող լուսոյ և երկնքի աստուածն իրենց ստեղծողն ու բարերարն է և այդ պատճառով էլ իրենց սկզբնական հայրենիքը արևելքն են համարում, որտեղ մեքսիկացիները ստեղծեցին «Ացտլանը՝» լուսոյ երկիրը և աւելի յաճախ՝ հոգիների աշխարհը երեկոյեան երկն-

քում, որտեղ հանգուցեալների կղզիները մայր մտնող արևի ոսկեփայլ ճառագայթների մէջ են երևում: Հոգու անցնելիք ճանապարհի նկարագրութեան, նրա վտանգների և փրկանքների մէջ այնքան շատ ընդհանուր կէտեր կան, որ միսիօնարն իր բոլոր կամքի եռանդով չի կարող մէկ ազգից միւսին հասնել: Վերևն արդէն յիշեցինք այն հաւայի զրոյցը՝ հոգու սառ-
րին աշխատել յետ բերելու մասին:

Հազիւ թէ ստեղծագործութեան վերաբերեալ մի պատմութիւն լինի, որի մէջ յիշուած չլինէր ծառը, որ երկնքի և վերջապէս ամբողջ ստեղծագործութիւնը դրանից է առաջացել:

Այս ամբողջ դիցաբանութիւնը կիսով չափ առանց հասկանալու միացած, իր այժմեան դրութեամբ ինչպէս հին ժամանակներից մնացած և օտար քարերով շինուած մի շէնք, որտեղ այժմեան մարդկութեան խնկական աստուածները, հանգուցեալների վերադարձող և թափառող հոգիները հազարաւոր ձևերով վխտում են:

Հոգեպաշտութեան սկզբունքներն ուրիշ ժամանակներից և ուրիշ ազգերից են երկրիս վրայ տարածուել, քան համաշխարհային առասպելները, աստուածների մասին զրոյցները և միւս աշխարհի նկարագրութիւնները. առաջինները հարկաւ աւելի վաղ ժամանակների ծնունդ են քան թէ վերջինները: Երկուսն էլ նոյն իսկ միմեանցից ամենահեռու գտնուող երկրներում աչքի ընկնող նմանութիւններ ունին. բայց ամեն տեղ էլ նրանք երկու առանձին առանձին մտքերի շրջան են կազմում, որոնք մի քանի կէտերում միայն աւելի սերտ յարաբերութիւն ունին և որոնց մէջ տեղն է «ազատ հնարագիտութիւնը» կամ առ սակաւն «ազատ այլափոխութիւնը»: Մենք այն կարծիքի չենք, որ այս աւանդութիւններից զուրկ ազգերի ամեն մի սովորութիւնը պատմական խորն արմատներ պէտք է ունենայ: Շատ բան խաղալով է հնարւում. բալաբանների ըխամբայի պաշտամունքը քմահաճութեան միակ յաջող թելադրութիւնը չէ: Մեծ նմանութիւնների հետ գտնում ենք նաև փոքրերը, որոնք օգնում են բացատրելու այն երևոյթները, որոնց մնացորդները, արմատները կամ շիւերն են իրենք:

Ինչպէս որ մենք երկրիս բոլոր մասերում միեւնոյն հացահատիկ բոյսերն ենք գտնում, որտեղ Եւրոպացիները տներ են շինել և երկիրը մշակել են, այդպէս էլ մի մի ինքն ըստ ինքեան չնչին նշանակութիւն ունեցող նախապաշարման սովորութիւններ ինչպէս մնացորդներ և հետքեր ամենտեղ տարածուած մտքերի։ Ոչ թէ միայն չար աչքին հաւատալը, այլ նաև ձեռքն ու պայտն իբրև միջոց չար աչքի դէմ՝ տարածուած են Հնդկաստանում, Արաբիայում, Հիւսիսային Աֆրիկայում և Եւրոպայում։ Որ Մարոկկոյում կանայք սուգի միջոցին կամ հիւանդութիւնից յետոյ իրենց մազերից փունջ շինելով որոշ ծառերից կախում են, սա մի այնպիսի սովորութիւն է, որ մենք իբրև «մազերի զոհաբերութիւն» ամենատարբեր ձևերով երկրիս ամեն մասերումն էլ պատահում ենք. դա կազմում է այն սովորութիւնների մի մասը, որոնց նպատակն է մարմնի անպէտք մասերի պահպանելը կամ զոհաբերութիւնը։ Այդ կարգին է պատկանում նաև թլպատութիւնը. Զուլուները գործ են դնում, իսկ բէչուանները ոչ. սովորական է Նոր-Կալէդոնիայում, իսկ լոյեալիտէտ կղզիների վրայ—ոչ։

Զանազան կրօնների տարածման վրայ մի ընդհանուր ակնարկ ձգելու համար՝ սովորաբար կրօնները բաժանում են մի քանի մեծ խմբերի։ Եթէ ուզում ենք, որ այդ բաժանումը հիմնուի խորիմաստ տարբերութիւնների վրայ, որպէս զի մարդկութիւնը պատահական մասերի չբաժանուի, այլ ըստ զանազան կրօնական հաւատալիքների զարգացման վեհութեան և խորիմաստութեան՝ չպէտք է միայն արտաքին ձևերն ի նկատի առնուին և այդպիսով խմբերի բաժանուին, ինչպէս՝ քրիստոնէութիւն, կռապաշտութիւն. միաստուածութիւն, բազմաստուածութիւն։ Եթէ մի հայեացք ձգենք մարդկութեան կրօնական և ընդհանուր զարգացման վրայ միաժամանակ՝ կտեսնենք, որ կրօնական զարգացման ամենամեծ հիմնաքարերն ուրիշ տեղ են գտնւում։ Միաստուածութիւնը նոյն իսկ կռապաշտների բազմաստուածութեան մէջ առաջ է գալիս իբրև բնական ձգտումն՝ մի բարձրագոյն էակի ստեղծագործութեան համար և միաստուածական հաւատալիքների մէջ նոյնպէս բնա-

կան ձգտումն կայ բաժանելու մէկը, հեւաւորը՝ շատ հասանե-
լի սրբերի:

Այսօրուայ մարդկութեան կրօնական զարգացման սկզբում մենք տեսնում ենք՝

I. Կրօններ, որոնց մէջ աստուածութիւնը մարդկայնօրէն վեր ու բարձր չէ կանգնած և որոնց մէջ դեռևս բարոյական տարրը դուրս են: Դրանց հիմքն է միմիայն հոգիներին և ուրուականներին հաւատալը. դրա հետ կապակցուած է դուշակութիւնը, բժշկութիւնը, անձրև բերելու արուեստն ու այլ նախապաշարմունքներ:

Կրօնների մի խմբի մէջ տեսնում ենք բնական երևոյթների թոյլ կապակցութիւն, այդ պատճառով և դերը հոգւոյն մեծ աստուածապաշտութիւնը. այդ նկատւում է շատ նեգր ժողովուրդների և հիւսիսային ասիացիների մէջ. ուրիշ խմբերի մէջ գտնում ենք տիեզերական և աստուածային մարդկայնացուած բարձրագոյն զարգացումն մի ամբողջ սիստեմի. դրանք ովկիանացիք և ամերիկացիք են:

II. Այն կրօնները, որոնց աստուածութիւնը բարձր են դասուած մարդկային շրջանից և ուրիշ մտաւոր ձգտումներից ինչպէս գիտնական, բանաստեղծական հակումների հետ խառնուելուց հետզհետէ ազատւում են, բայց դրա փոխարէն՝ աւելի և աւելի զարգացնում են բարոյական տարրը: Հանդերձեալ կեանքի գաղափարն ընդունելով վարձատրութեամբ և պատժով հանդերձ՝ միևնոյն է թէ ընդունում է հոգիներին հաւատալը:

Բազմաստուածութիւնը, որ տեղական շատ փոփոխական աստուածներին իշխող դիրք է տալիս՝ առանց նոցա մի որևէ բարոյական արժէք վերագրելու. դոքա են Բրահմային և Բուդդային հաւատացողները, եւրոպացիք քրիստոնէութիւնից առաջ և նախկին ամերիկացիք:

Միաստուածութիւնը զարգացման տարբեր աստիճանների վրայ՝ նայելով մի Աստուծոյ և մարդկանց մէջ եղող Աստուածային աղգականների, սուրբերի թուին ու նշանակութեանը: Միակ Աստուածն երևան է գալիս ամենաբարձր բարոյական կատարելութեամբ. դրանք են՝ հրէաները, քրիստոնեաները և մահմեդականները:

Քրիստոնէութիւնը սերտ յարաբերութիւն ունենալով Եւրոպայից դուրս գտնուող ազգերի հետ՝ թողեց այն նախապաշարումը՝ իբրև թէ նրանց հոգիները փրկութեան համար չեն որոշուած: Եւ 16-րդ դարու սկզբից արդէն միսիոնէրներն անհրաժեշտ ընկերակիցներն են վաճառականութեան, տիրապետութեան և նոյն իսկ ստրուկների վաճառման գործում: Միսիոնէրների առաջ գալը մեծ նշանակութիւն ունի ազգագրական տեսակէտից՝ ոչ միայն իբրև կրօնական նպատակով հիմնուած մի հաստատութիւն, այլ առ հասարակ իբրև օտարների գործունէութիւն մի ազգի մէջ, որի էական յատկանիշների մասին նրանք շատ քիչ գաղափար ունեն, բայց մեծ ձգտումն ունին ուսումնասիրելու:

Միաստուածեան կրօնները թէև չեն կարող ընդունել Նեմբէի կամ Մանիտուի տատանուող և անհաստատ մտապատկերները. շատ դէպքերում նրանք չեն կարողացել նոյն իսկ բարձրագոյն էակի անունները պէտք ածել իրենց մի Աստուծոյ համար, որովհետև թիւրիմացութիւններ շատ կլինէին: Բայց բնական ազգերի կրօնների ուրիշ մտքերի մէջ կայ միացման կարելիութիւնը և եղածի հիմնաւոր շարունակութիւնը. այդ կարելիութեան շեշտելը տեսականապէս նոյնչափ նշանակութիւն ունի բնական ազգերի արհամարհուած կրօնի ճանաչողութեան համար, որչափ գործնական՝ քրիստոնէութեան ակնկալութիւնների արժէքը որոշելու համար: Հանգուցեալների հոգիների յարատև կենդանի մնալու միտքը նման է քրիստոնէութեան հոգու անմահութեան ուսմանը: Նախնեաց հոգիների յիշողութեան խնամքը չէ հակասում քրիստոնէութեան. բայց բանը չպէտքէ հասցնել նախնեաց աստուածացմանը. այդտեղից արդէն սկսւում է կռապաշտութիւնը: Քրիստոնէութիւնը բնական ազգերի տիեզերական առասպելների մէջ կրկին գտնում է ստեղծագործութեան ուսման սկզբունքները և շատ անգամ աչքի ընկնող նմանութեամբ. Դէմիուրգների հետ կարելի է կապակցել վերջապէս քրիստոնէական ըմբռնումը Հայր Աստուծոյ և Որդի Աստուծոյ մասին:

Անդունդն աւելի խորը կբացուի, եթէ մերձենանք բարոյա-

կան օրէնքներին, որ քրիստոնէական ուսման էական բաղկացուցիչ մասերն են։ Միսիօնարները՝ չնայելով Աբրահամի զոհաբերութեանը, յաճախ պէտք է հանդիպեն մարդկանց զոհաբերութեան և կեանքի չնչին գնահատման և որ աւելի դժուարն է, նրանք պէտք է իրենց աշակերտողների բարոյականութեան վրայ ազդեն դուրս աշխարհային շրջանից շատ աւելի հեռանալով՝ քան թէ կռապաշտ քրմերը։ Դրանց քրիստոնէութիւնը պէտք է ընկերավարական և տնտեսական կողմեր ունենայ, որպէս զի յեղափոխական ազդեցութիւն ունենայ։ Բազմակնութիւնն ու ստրկութիւնը դայթակղութեան երկու մեծ քարերն են։ Միսիօներներն աշխատում են իրենց նպատակին հասնել՝ իրենց աշակերտողների տնտեսական դրութեան յեղափոխութեամբ, բայց դիւրութեամբ չափից անցնում են, որովհետև աղքատ, բայց յարմար դրութիւնից դէպի աւելի լաւ, բայց պահանջներով լի դրութեան փոխուիլը կարող է միայն տնտեսական յեղափոխութիւնն առաջացնել, որի հետևանքները կարող են թէ օգտակար և թէ վնասակար լինել և աւելի շուտ վերջինը, քան առաջինը։ Կրակապաշտների դրութիւնը կարող է Եւրոպացիների աչքին սարսափելի երևալ, բայց իրենց, կրակապաշտների աչքին շատ լաւ։ Միսիօնարը պէտք է հարկաւ այն տեսակէտով առաջնորդուի, որ բարձր քաղաքակրթութիւնն առանց այն էլ աւերիչ կերպով է ներգործում կռապաշտների կեանքի հանգամանքների վրայ, ուստի և ինքը պէտք է աշխատէ, որ գործնական կերպով մեղմացնէ իւր աշակերտողների դարձը։ Սակայն նա արհեստաւորի կամ վաճառականի դեր չպէտք է կատարէ, որովհետև այդ կհակասէ այն խորհրդաւորութեան տարրին, որ կայ բնական ազգերի քրմապետութեան մէջ՝ նախապաշարմանց ահագին քանակութեան հետ ի միասին։ Չի կարելի բանի տեղ չդնել այդ․ յիշենք օրինակ Աֆրիկայում շատ տարածուած հրաժարման ուխտը, որ առանձին ծէսով է տեղի ունենում. և կամ շամանի հոգեկան և մարմնաւոր ինքնակամ չարչարանքներով հոգին աւանդելը։ Հրաժարման և գործնական աշխատանքի յաջող կապակցութեան մէջ է կայանում հոգևոր միաբանութիւնների միսիօներների գործունէութեան բա-

ըեյաջող հետևանքները։ Եթե գերմանական միսիոներները յաջողութիւն ունեցան հերերոների մէջ, պատճառը նրանց տընտեսական և ընկերավարական զարգացումն էր, որ կարող էր ընդունել քրիստոնէութիւնը։ Խօսքով քարոզած ուսումից աւելի լաւ է ազդում գործը, որ երևում է միսիոների բռնած դիրքից և այն խաղաղ ու անդորր եղանակից, որով նա աշխարհի իրերն է ըմբռնում և գործադրում։ Նախապաշարմանց խառնակոյտի մէջ միայն քահանան կարող է խրամատ փորել. քահանան կարող է միևնոյն ժամանակ և բժիշկ լինել։

Երկրի իշխանների և քահանաների մէջ եղած և ամեն տեղ յայտնուող կապակցութիւնն ի նկատի առնելով՝ անկասկած է, որ առաքելութեանց յաջողութիւնը կախումն ունի նաև քաղաքական հանգամանքներից և դրանց ուղիղ գնահատութիւնից։ Ուր որ միսիոներները կարողանում են մի զօրեղ իշխողի հովանաւորութեան տակ լինել՝ այնտեղ էլ կարելի է լինում իրենց խնդրի յաջող լուծումը։ Գօնդօկօրօյում մեծ յոյսերով հիմնուած աւստրիական առաքելութիւնը ոչնչացաւ՝ առանց իր գործունէութեան հետքն անգամ թողնելու՝ որովհետև գըլխաւորապէս միմիայն իւր ուժերով էր ուզում գործ առաջացնել։ Այնտեղի կառավարութիւնը փոխանակ քաղաքականապէս բոլորովին ընկած բարի ժողովրդին զսպելու և իր կալուածքները պաշտպանելու, իւր էութեամբ և նպատակներով բոլորովին հակառակ էր առաքելական գործունէութեան և զբաղուած էր ստրկավաճառութեամբ։ Բոլորովին տարբեր հետևանքների հասան միսիոներները, երբ չհալածուելով ցեղապետից, կարողացան իրենց գործունէութիւնը զարգացնել, ինչպէս օրինակ Մօֆֆատը Մօզիլիկատզէի մօտ կամ թէ ուր որ կարողացան հզօր ցեղապետների պաշտպանութիւնը գտնել, ինչպէս Լիւինգստօնը բագուտօ-մակօլօլոյի մօտ կամ թէ զանազան դաւանութեանց միսիոներները Ուգանդայում։

Այս բոլորից պէտք է պարզ երևայ, որ քրիստոնէական առաքելութեան գործունէութիւնն յաջող հետևանք կունենայ, երբ նախապէս ուսումնասիրութիւն բնական ազգերի կրօնական հայեացքները և աշխարհային կարգ ու կանոնները։ Այդ

րանն ըմբռնող շատ միսիօներներին ազգագրութիւնը պարտական է շատ մեծ արժէք ունեցող աշխատութիւններ։ Յաճախ լեզուի անհրաժեշտ ուսումնասիրութիւնն էր պատճառ լինում ժողովրդի կեանքն հիմնաւորապէս ուսումնասիրելուն։ Սակայն ով կամենում է «վայրենուն» ուսուցանել, ինքն էլ պէտք է ըմբռնէ քրիստոնէութեան էութիւնն ու մտքերի խորութիւնը։ Յաջողութիւն չեն ունեցել ամենից շատ այն անզարգացած միսիօներները, որոնք իրենց հաւատի էութիւնն անգամ չեն կարողացել ըմբռնել, ինչպիսիներին որ ուղարկել է Անգլիան և հիւսիսային Ամերիկան. դոքա քրիստոնէական սիրուց զուրկ լինելով՝ յաճախ աւելի վաճառականներ և քաղաքական գործակալներ են եղել, քան թէ քրիստոնէութեան առաքեալներ։

Վերջացնելով մեր խօսքը՝ յիշենք նաև, որ մի նոր հաւատի տարածուելը միևնոյն ժամանակ նշանակում է և քաղաքակրթութեան յեղափոխութիւն և միմիայն մի սերնդի գործ չէ։ Առաքելութիւնը թոյլ չէ տալիս շտապելու. նա ոչ մի ջանքից փախուստ չպէտք է տայ՝ աւազի հատիկները միմեանց վրայ ժողովելու. նա չպէտք է արագ հետևանք ունեցող երևոյթներից սխալուի և դրանով իւր իսկական նպատակից փոքր ինչ անգամ չշեղուի։

Քրիստոնէութիւնից յետոյ առաքելութիւն ունի և իսլամն՝ իբրև երկրորդ միաստուածեան կրօն։ Իսլամականութիւնն յառաջադիմում է Աֆրիկայում և Ասիայում։ Նա ըստ երևոյթին տարածւում է ինչպէս Աֆրիկայի նեգրաբնակ երկրներում, ուր պահպանւում է երկնքի պաշտամունքը և արևմտեան Աֆրիկայում, ուր հոգևորականներն աննկատելի կերպով կռապաշտ քրմերի տեղն են բռնում. բայց այնուամենայնիւ իսլամն այդտեղ աւելի է արմատ բռնում՝ քան քրիստոնէութիւնը։ Իսլամը տրամաբանական դժուարութիւններ չէ յարուցանում և ինչ որ գործնականապէս պատուիրում է՝ դժուար չէ իրագործելը։ Բազմակնութեան և ստրկութեան թոյլտուութիւնը անհամեմատ առաւելութիւն է տալիս նրան՝ քրիստոնէութեան դէմ։ Բազմակնութեան արգելքը քրիստոնէութիւնից հեռացնում է— մինչև որ տեղի կունենայ բարքերի մի մեծ յեղափոխութիւն—

շատ կին ունեցողներին, որոնց հասարակական բարձր դիրքը ոչնչով այնչափ աչքի չէ ընկնում, որչափ բազմաթիւ կանայք պահելով։ Այդ պահանջը շատ անգամ միսիոնարներն էլ խստիւ չեն կարողանում անել և հարաւային Ուրալեան կողմերում, նոյն իսկ ռուս աստիճանաւորների աչքի առաջ՝ շատ թաթարներ քրիստոնէութիւնից հեռացան այդ պատճառով։ Իսլամի աղդեցութեան մեծ մասն այդ թոյլտուութիւնից է կախուած։ Դրան աւելանում է նաև այն հանգամանքը, որ իսլամն ընկերական և պետական կազմակերպութեան աւելի ստոր աստիճանների վրայ գտնուող ժողովուրդներին աւելի է յարմարւում և կապուած է մի քաղաքակրթութեան հետ, որ այնքան աւելի մօտ է այդ ժողովուրդներին, որքան դրանք աւելի մօտ են իսլամի ծննդավայրին՝ թէ ըստ աշխարհագրութեան և թէ ըստ կլիմայի։

Մարդկութեան երրորդ մասն անգամ դեռ ևս քրիստոնեայ չէ։ Հինգ հարիւր եօթանասուն (570) միլիօն միաստուած պաշտողներից՝ չորս հարիւր քառասուն (440) միլիօնը քրիստոնեայ է։ Երկրիս բնակիչների մնացած ինը հարիւր (900) միլիօնից մեծ մասը, վեց հարիւր միլիօն, բուդդայեական են, որոնք ամենից մեծ դժուարութեամբ են հակւում դէպի քրիստոնէութիւնը։ Կռապաշտների մնացորդներից կարողացել են միսիօնարները, որ այժմ երեք հազարի չափ են, շատերին քրիստոնեայ դարձնել։ Աւելի մեծ յաջողութիւն միսիօնարներն ունեցել են Ովկիանեան աշխարհում, ուր բազմաթիւ կղզիների բնակիչներն քրիստոնէութիւն են ընդունել և իրենց միջից արդէն միսիօնարներ են ուղարկում մօտակայ կղզիներում քարոզելու քրիստոնէութիւնը։ Աֆրիկայում Մադակասկարը համարեա թէ ամբողջովին քրիստոնէական ազդեցութեան ներքոյ է. հօթենդօտներն ու հերերօները, Լիբէրիայի և Սիէրա Լէօնէի բնակիչները և Անգօլայի, Ոսկեզրի և ստորին Նիգէրի բազմաթիւ ցեղերը քրիստոնեայ են դարձել։ Ասիայում Հնդկաստանի մօտ չորս հարիւր երորդ մասը քրիստոնեայ է մկրտուել. այս թիւն աւելի քիչ է Չինաստանում՝ ժողովրդի քանակութեան հետ համեմատելով. Չինաստանում միայն վաթսունու հինգ հազար (65,000) քրիստոնեայ կայ։

Գերմ. թարգմ. Ի. Յարութիւնեան